Հրատարակվում է չորեքշաբթի, ուրբաթ և կիւրակի օրերը։

Տարեկան գինն է 10 ռուբլի, կէս տարուանը 6 ռուբլի, 3 ամսուանը 3 ռ. և մի ամսուանը 1 ռ.։ Նոյանձին համարը 7 կոպէկ։

Բաժանորդագրութիւնն ընդունվում է խմբագրատանը և կենտրոնական գրավաճառանոցում։

Հասցէն՝ Тифлисъ, Редакція „Ардзагангъ". կամ՝ Tiflis, Rédaction „Ardzagang".

ԱՐՁԱԳԱՆՔ

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

Խմբագրութիւնը բաց է ամեն օր 10—1 ժամ (բացի կիրակի և տօն օրերից)։

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ՀՐԴԵՀԻ ԴԷՄ ԿԱԼՈՒԱԾՈՅՆԵՐԻ ՓՈԽԱԴԱՐՁ ԱՊԱՀՈՎՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

յայտնում է ի գիտութիւն Ընկերութեան պ. պ. անդամների, որ կիրակի, մարտի 20-ին, առաւօտեան 10 ժա'ին, քաղաքային խորհրդի դահլիճում նշանակուած է

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

որ պէտք է քննէ և հաստատէ՝

1) 1893 թուի վարչութեան հաշիւը,
2) Վարչութեան 1894 թուի նախահաշիւը և

ԿԱՏԱՐԷ ՀԵՏԵՒԵԱԼ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ա) Վարչութեան նախագահի, փոխանակ Ա. Ս. Մատինեանի, բ) վերստուգիչ մասնաժողովի երկու անդամների, փոխանակ Ա. Թ. Փրիդոնեանի և Ա. Մ. Թամամշեանի և վարչութեան անդամոց երկու կանդիտատների, փոխանակ Ե. Ս. Խանդալամեանի և Պ. Յ. Ալիբէգեանի, այս բոլոր անձանց ծառայութեան ժամանակամիջոցը լրացած լինելով։

(կ. և չ.) (2—2)

„ԱՐՁԱԳԱՆՔ"

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐԸ

1894 ԹՈՒԻՆ

«Արձագանքը» լոյս է տեսնում շաբաթը երեք անգամ—չորեքշաբթի, ուրբաթ և կիւրակի օրերը։

«Արձագանքի» տարեկան գինը 10 ռ. է, կէս տարուանը—6 ռ., երեք ամսուանը— ռ., մի ամսուանը—1 ռուբլի։

Բաժանորդագրութիւնն ընդունվում է խմբագրատանը (Վելիամինովսկի փողոց, № 22, տուն Խանդալամեանի) և «Կենտրոնական գրավաճառանոցում»։

«Արձագանքին» օտար քաղաքներից գրուել ցանկացողները պէտք է դիմեն հետևեալ հասցէով. Тифлисъ, Редакція газеты „Ардзагангъ". իսկ արտասահմանից՝ Tiflis, Rédaction du journal arménien «Ardzagang».

Յայտարարութիւններ ընդունվում են թէ հայերէն և թէ օտար լեզուներով։

Խմբագիր-Հրատարակիչ՝
ԱԲԳԱՐ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ուսուցիչ Տէր Յովհաննիսեանի սպանման գործը։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. — Մոսկվայից։ Թիֆլիզից-Վլադիկավկազ երկաթուղու գծի առիթով։ Սևանայ լիճը հետազօտելու մտադրութիւն։ Մաքսատների հաստատութիւն Միջին Ասիայում։ «Որեւելքից»։ Նորչ բարեկարգիչ։ Քաղաքիս դպրոցներին կրօնական ուսման մէջ վարժեցնելու խնդիրը։ Նամակ Սալխերից։ Տ. Տէրեան-Ղորղանեանի նուագահանդէսը։ Սօլօլակի ձրի ճաշարանի օգտին տուած պարերեկոյթի հաշիւը։ Թիֆլ. հրատ- Ընկերութեան պարահանդէսի հաշիւը։ Ս. Էջմիածնից։ Օսմանեան նախկին հիւպատոս Հասիբ-բէյ, Ղալագէի՝ մեր յատուկ թղթակցի նամակը։

ՄԱՄՈՒԼԻ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ.—«Մի քանի օգտակար խորհրդածութիւններ»։

ՓԵԼԻԵՏՕՆ. — Սիմէոն կաթողիկոսի կենսագրութիւնը։

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՁԱՆԱԶԱՆ.—Հայկական քաղաքավարութիւն։

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՈՒՍՈՒՑԻՉ ՏԷՐ-ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆԻ ՍՊԱՆՄԱՆ ԳՈՐԾԸ

Երէկ, մարտի 15-ին, Թիֆլիզի դատաստանական պալատի առաջին քրէական դեպարտամենտը, նախագահութեամբ աւագ նախագահ պ. Վրասսկու և ներկայութեամբ անդամոց պ. պ. Վէրխովսկու և Կարնովիչի քննեց՝ Սղնախում սպանուած հայոց դպրոցի ուսուցիչ Տէր-Յովհաննիսեանի գործը։ Նահանգական դատարանը յանցաւոր ճանաչելով այդ սպանութեան մէջ երիտասարդ իշխան Աբաշիձէին որոշել էր՝ զրկել նորան անձնական և ըստ ծագման պատկանեալ իրաւունքներից և աքսորել Սիբիրիայի Իրկուտսկ նահանգը։ Այդ դատավճռի դէմ բողոքել էին պալատին, նախ՝ իշխան Աբաշիձէն և երկրորդ՝ հանգուցեալի այրին, որի օգտին նահանգական դատարանը որոշել էր՝ մեղապարտ իշխանից տարեկան ապրուստ 180 ռուբլի։ Սպանութիւնը տեղի էր ունեցել մի խնճոյքի միջոցին, ուր երկուսն էլ հրաւիրուած էին։ Իշխ. Աբաշիձէի պաշտպան երդ. հաւ. պ. Ա. Օպոչինինը պնդում էր, թէ քանի որ սպանութեան պատճառն անյայտ է, պէտք է ենթադրել, որ յանցանքը կատարուել է այն րոպէին, երբ Աբաշիձէն գինու ազդեցութեան ներքոյ խելքը և միտքը կորուսած է եղել, կամ թէ այդ յանցանքը պէտք է բացատրել նրանով, որ Աբաշիձէն և Տէր-Յովհաննիսեանցը մի դժգոհութիւն են ունեցել հացկերոյթի ժամանակ, որ առաջ է եկել հայերի և վրացիների մէջ յայտնի թշնամութիւնից. և ահա այդ յարաբերութիւններից թելադրած Աբաշիձէն զայրացել է և դաշոյնով մահացու վէրք է տուել Տէր-Յովհաննիսեանցին։ Պալատի պրօկուրօրի օգնական Ե. Ն. Խլօդովսկին, որ մեղադրում էր իշխան Աբաշիձէին, պատասխանեց պ. Օպոչինինին, թէ նորա ենթադրութիւնը հայերի և վրացիների թշնամութեան մասին միանգամայն անճիշդ է. ընդհակառակ այդ երկու ազգութիւնները բարեկամական յարաբերութիւն ունին, որի ապացոյցը կարող է ի միջի այլոց այն լինել, որ Աբաշիձէն և Տէր-Յովհաննիսեանցը ի միասին եղել են միևնոյն ճաշկերոյթին։ Պ. Օպոչինինը բողոքեց պ. Խլօդովսկու խօսքերի դէմ, ասելով որ նա սխալ է հասկացել իւր յայտնած միտքը։

Պալատը ժամը $2^1/_2$ յետ կէսօրի յայտնեց իւր դատավճիռը, որով որոշեց հաստատել նահանգական դատարանի վճիռը, բայց ի նկատի առնելով առանձին հանգամանքները, որոնք երևում են գործի մէջ, միջնորդել Նորին Կայսերական Մեծութեան առաջ փոխելու ըստ օրինաց որոշած պատիժը՝ երկու տարուայ բանտարկութեամբ և իրաւանց մասնաւոր սահմանափակութեամբ։

Նստոյն մեծ բազմութիւն էր ներկայ և նորա մէջ երևում էին վրաց շատ տիկնայք և օրիորդներ։ Մեղադրածի քոյրը՝ վճիռը յայտնելուց յետոյ՝ ուշաթափ եղաւ հիստերիայից։ Ներկայ էր և հանգուցեալ Տէր-Յովհաննիսեանի այրին, որին պալատը որոշեց տարեկան վարձատրութիւն մինչև ամուսնանալը՝ 270 ռուբլի։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄՈՍԿՎԱՅԻՑ մեզ հեռագրում են որ այնտեղ երկարատև հիւանդութիւնից յետոյ մարտի 13-ին վախճանուել է պրօֆեսոր Ներսէս Ներսէսեանցը։ Մենք ի մօտոյ կը հրատարակենք այս պատուական հայի կենսագրութիւնը, որ իրաւագիտութեան փայլուն ներկայացուցիչներից մէկն էր Ռուսաստանում։

* *
*

Մենք հաղորդել էինք թէ տէրութիւնը մտադրութիւն ունի Թիֆլիզից Վլադիկավկազ երկաթուղի գիծ կառուցանել. այժմ մայրաքաղաքի լրագիրները հաղորդում են, որ այդ մտադրութիւնը բոլորովին թողնուած է, որովհետև նախապատրաստական հետազօտութիւնները պարզել են, որ Կովկասի լեռնաշղթայով գիծ կառուցանելն ահագին դժուարութիւններ է ներկայացնում և մեծ փող է նստելու։ Այս պատճառով փոխանակ այդ ուղղութեան, երկաթուղին կանցնի Պետրովսկից մինչև Բագու, որ թէ ամենայարմար և թէ ամենաձեռնտու գիծը պէտք է համարուի, որովհետև այս գծի երկու գլխաւոր կէտերն էլ—չսառչող նաւահանգիստներ են։

* *
*

«Նովոստի» լրագիրը հաղորդում է, որ պ. Մարկովը առաջարկութիւն է արել կայսերական աշխարհագրական ընկերութեան այս ամառ հետազօտել Սևանայ լիճը, առանց որևէ դրամական նպաստ խնդրելու ընկերութիւնից։ Ընկերութեան խորհուրդը ընդունել է այդ առաջարկութիւնը, աչքի առաջ ունենալով որ այդ լճի մասին գիտութեան մէջ ներկայումս լոկ թերի և անճիշդ տեղեկութիւններ կան։

* *
*

Ելևմտից նախարարութիւնը հաստատելու է, ինչպէս հաղորդում է «Նով. Վր.» լրագիրը, առաջնակարգ մաքսատներ միջին Ասիայի հետևեալ կենտրոններում՝ Կրասնովօդսկ, Չիգիշլար, Ասխաբադ, Ուտախ և Բուխարա, իսկ երկրորդ կարգի մաքսատներ, Մերվ, Կելիֆ և Սերախս։

* *
*

Պօլսաբնակ Տօքթէօր Մինէճեանի բժշկի կինը իր ամուսնութենէ քիչ ժամանակ յետոյ իր տուն թողլով գնացած էր կենակցել մի ուրիշ անձի հետ զոր արդեն կը ճանչէ եղեր։ Կինն ուղղութեան բերելու մասին թէ բժիշկ էրիկը և թէ պատրիարքարանի յորդորներն ու արած դիմումները ապարդիւն մնացած էին. այնուամենայնիւ Տօքթէօր Մինէճեանին

ՓԵԼԻԵՏՕՆ

ՍԻՄԷՕՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆԸ *)

Ժ.

Կաթոլիկութիւնը և Փռանկ պաշտօնեաները Հայաստանում։ Սիմէոն կաթողիկոսը որպէս պաշտպան Հայաստանեայց եկեղեցու միութեան։

—

Որքան և մեծ լինէր ունիթոռների, Հռովմի այդ անձնուրաց քարոզիչների ջանքը Հայոց եկեղեցին միացնելու պապականութեան հետ, այնու ամենայնիւ նոցա ձգտումները միայն մի քանի գաւառներում կարողացան կենդրոնանալ և այն տեղերը իրականութիւն ստանալ. այն էլ ոչ այնպիսի մեծ ծաւալով, ինչպէս որ իրենք կ'ին երազում։ Եւ եթէ Հայաստանի մի քանի բնագաւառներում նոքա կարողացան յաղթանակ տանել, դորա համար մենք պարտական ենք նոյն իսկ մեր հոգևորականներից ոմանց, որոնք գառնազգեստ գայլերի նման անարժանութեամբ ընդունել էին իրանց վերայ Հայաստանեայց ս. եկեղեցուն ծառայելու նուիրական կոչումը, բայց ի ներքուստ լի էին կեղծաւորութեամբ և ապականութեամբ։ Մենք այդ կտեսնենք պատմութիւնից և նորագոյն ապացոյցներից մի քանիսը փոքր ինչ ներքև կը տեսնենք։

Սակայն կաթոլիկութիւնը թերևս անհամեմատ աւելի մեծ թուով զոհեր տանէր հայ եկեղեցուց, եթէ որ սորա պաշտօնեաների մէջ պակասէին այնպիսիները, որոնք գիտէին ըմբռնում էին նոցա խարդախ դիտումները այսր, հայ եկեղեցին միշտ առաջ է բերել անձինք, որոնք քաջ հասկանում էին, որ կաթոլիկութեան նպատակը կրօնը լինելով՝ աշխատում է մեռցնել մարդու մէջ ազգայնութեան գաղափարը և հայը կաթոլիկութիւն ընդունելով՝ դադարում է իրան հայ անուանելուց [1])։

Պէտք էր սպասել, որ գիտութիւնը վերջ կը դնէր այդ հակազգային հոսանքին և դորա կարապետները պիտի լինէին Մխիթարեան հայրերը, բայց թերթելով նոցա դարաւոր հայ հրատարակութիւնները, առանց ուրանալու ի հարկէ նոցա տուած օգուտը հայ լեզուին և գրականութեան, մենք միանգամայն հակառակ և ցաւալի եզրակացութեան ենք գալիս. Նոցա հրատարակած կրօնական և գրեթէ ազգային բոլոր հրատարակութիւնները աղճատուած են և կաթոլիկական խմորով զանգուած.. Սակայն այս յայտնին է, ինչ որ ամենքս ցերեկի պէս պարզ տեսնում ենք և դեռ միջոց ունինք այդպիսիները ընտրելու և «զխոտն ի բաց ընկենլոյ»։ Բայց ի՞նչ կարող ենք անել այն գաղտնի միջոցների վերաբերութեամբ, որոնք միշտ ծածկուած են մնում դիտող աչքերից և անզօր ենք այդ միջոցների առաջ մեր բոլոր զէնքերով...

Իբրև ապացոյց մի քանի օրինակ բերենք, որոնք առաւել պիտի համոզեն մեզ, թէ որպիսի անկեղծութեամբ են անցեալում գործել վեր. հ. Մխիթարեանները։

Մեր ձեռքին են երկու անստորագիր թղթերի պատճեններ Մխիթարեան միաբաններից՝ ուղղած Վրաստանու հայերին և Թիֆլիզի հայ հոգևորականներին, որոնք որքան էլ անախորժ հնչելու լինին ընթերցողի ականջին, բայց և այնպէս մենք նոյնութեամբ առաջ ենք բերում այստեղ, որպէս արժան անջինջ յիշատակի այդ գրութեանց հեղինակների ... յարաբերութեան դէպի Հայ ազգն ու Հայաստանեայց ս. եկեղեցին։

ա.

«Վրաստանու Հայք որք ընդդէմ էք Հռոմա սուրբ եկեղեցոյն ձեզ եմ ասում և ոչ էն հայերին որք ուղղափառ են.

«Մինչև երբ լինիք այդպէս թմբրեալ և ցնորեալ ոչ ապաքէն դուք մեր ազգից էք և ընդդէմացաք առաքելական եկեղեցոյն, որ գլուխ ամենայն քրիստոնէից և եկեղեցեաց է Հռոմայ սուրբ եկեղեցին քանի և քանի հազարաւոր վանօրայք ունի ստորադրեալ այն անյաղթելի Հռոմ որոց մին ահա այս մեր սուրբ Ղազարու վանքն է, և այսմանէ եղև երկրորդ լուսաւորութիւն ձեր և մեր ազգութեան որպէս մինչև ցայսօր աշխատում ենք անդադար ցայգ և ցերեկ վասն ձեր հայոց լեզուաւ տպել զանազան գրեանք, մի քանի ժամանակից առաջ լսեցինք գի յոյժ կարօտին տպեալ գրեանց Վրաստանաբնակ հայք որք ընդդէմ են մեր ուղղափառութեան, և այսու աղաղաւ մեր այս սուրբ ուխտ լսեց ձեր հառաչանք և աղաղակ՝ հոգևորապէս ի խոր սրտէ հառաչեց, և ձեռնամուխ եղանք այս գործին։ Էջմիածին՝ եպիսկոպոսարան որ եղել է վասն ձեր ողորմելեաց իբր կաթողիկոսարան, այժմ ժամանակի է գայս վանս ամենայնի սուրբ Ղազարու առաւել փառաւորագոյն քան զնա առ այն զի նա ընդդէմացաւ Հռոմայ սուրբ առաքելական հիմնադրութեան և հատեալ է անդամութենէ նորա այսով երևակայեցէք զի սա այսինքն Ղազարոսի վանք ոչինչ ունի ձեզանից արդիւնք կամ ընծայաբերութիւն, և ոչ մեր՝ ուղղափառ հայոցմէն. այս սուրբ վանս իսկզբանէ ոչ ունէր ոչինչ կալուած, բայց ձեր Էջմիածնի ունէր կալուած բազում դարձեալ կարօտ էր ազգի նուիրականութեան ամբռահաստութեան չհասուցեամբ և այլ այսպէս հնարիւք կկոփէր և կկողոպտէր լուծալի ազգին միթէ իւր սեպհական կալուածով չէր կարող բաւականանալ և հարստանալ։ բայց աշխօրինի պիղծ և կափօղ մարդիկ ընաւ չինք տեսած, որ հարուստ լինին. Բաւ է բաւ է այդքան ի քուն լինել արդ ժամ է զարթնուլ այդպիսի թմբրութենէ և ճանաչէք զօղ ըստ տէրունեան հրամանի թէ «զօղ ոչ գայցէ...» և կամ ճանաչէք զայն, «որ արտաքին ոչխարք են և ի ներքուստ գայլ ափշտակող...» ամենայն բանք ձեր արծաթով լինի և անկեղծութեամբ ձեր եկեղեցոյ միջի ոչինչ այնպէս ձայնով բան չլսի այսինքն ժամերգութեան որպէս արծաթի և դրամի, ուստի բացէք ձեր հոգեկան աչքեր և տեսէք թէ արդեօք որն է ուղղափառ ուրեմն այսքան ծանօթութիւն տալ ձեզ բաւական համարեցէք. մտէք մեր ուղղափառ սուրբ եկեղեցիք և տեսէք թէ կայ արդեօք առևտրական բան կամ սիմոնաճառութիւն և այլ այսպիսի բաներ ինչպէս ձեր եկեղեցիներում կան, և մեր եկեղեցիք հեռի են այսպիսի սիմօնական բաներից, միայն այս է մեր բան որ ահա տպեցինք վրացերէն լեզուաւ երեք գիրք, որ կարի հարկաւոր էր Վրաստանաբնակ հայերին, այն պատճառաւ մենք աշխատեցինք և տպեցինք այս գիրքեր, որ վրացիք ոչինչ չեն տպում ձեզ համար, և նմանապէս էջմիածնեցիք այլ միայն զան ժողովք անելոյ և կողոպտելոյ, բայց այնու ոչինչ օգուտ չեն բերել ձեզ, և ամենայն շաբաթու միանգամ, և ամենայն տեղ քանի և քանի ժողովք լինում է. ամիս չի լինի, որ ժողովք չլինի դրամոց ձեր հայոց եկեղեցիներում։ Ոչ ապաքէն հռոմանեցի քահանայք կային Վրաստան և այժմ հայոց ուղղափառներից կան շատեր միանգամ տեսել էք, որ նոքա փող ժողովք անելու ցանկացել են։ Ձեր Էջմիածնայ միաբանք կը հնարեն մի կոնդակ ասայսեալ թուղթ կտան մէկի ձեռք և նրանով ման է գալիս թէ սուտ և թէ ստոյգ լինիլ ով գիտէ։ Ահա այս բաներ տեսնելով մենք յոյժ վշտացանք և ցաւեցանք վասն ձեր, ուստի ի լոյս ընծայեցինք երեք գիր մի համառօտ աստուածաշունչ մին համառօտ վարք սրբոց և սակաւ ինչ եզօպոսի առակներ. և եթէ այդ կը ծախի՞ ձեր մէջ էն ժամանակ միտք ունինք շարականից և այլ բաներից ևս թարգմանենք վասն ձեր աստուծով» *)։

բ.

«Ինչպէս են Տփխիսու հայոց Աւագ քահանայք.»

«Այս քահանայք եօթն օրւա մէջ երեք կամ չորս անգամ եկեղեցոյ երես չեն տեսնում եթէ կերթան այն էլ վերջի ժամանակ և այն ժամ ևս վասն արծաթի թէ սակաւ եղաւ արծաթ աստուած խնայէ այնտեղի սպասաւորաց մեծ մեծ կխռովտան իբր անկարգութիւն տեսնելով իրանց ստորադրելոց, որ իրանք բոլորովին անկարգ են և ամեն մին պաշտօն վեր են կալի, որ ոչ ոք չկարողանա ասել թէ ընդէր ժամ չես գալի, որ կոնսիստորի անդամ լինելով, որ կործակատար և այլ ըստ կարգին. երբ նոցա հերթակալութիւն է կամ պատարագ պէտք է անել՝ գտնում են այնպիսի խեղճ մի քահանայ, որ իրանց մօտ գործք ունի կամ փոքր ինչ շահաւէտութիւն տալիս են ժողովրդին գոփելով կամ զանձանակի հրաման տալիս են կամ իրիցփոխանից ոին որ իրանց ընկեր է եղել բան գլխում են անտէր եկեղեցական արծթիւնքից և իրանք իբրև ոմն եպիսկոպոսի իշխան պողոտայիս շրջելով և այլ ըստ կարգին պճնեալ իբրև նորահարս մետաքսայիւք ահա փոքր ի շատէ նոցա գործք և այնպէս անց է կենում ամբողջ տարի, որ մին կամ երկու անգամ պատարագ չեն կատարում որն որ նոցա եկեղեցոյ մէջ ամեն օր պատարագ մատուցանւում է»,

Չենք կարող երաշխաւորել, թէ այս առաջ բերած գրութիւնները չեն պարունակում իրանց մէջ մի երկու դառն ճշմարտութիւններ, բայց միանգամայն դատապարտելի է թւում մեզ նախ գործողութեան տմարդի ձևը և ապա այն բիրտ լեզուն, որ գործ է դրուած այդ գրութեանց մէջ։

Դարձեալ մի այլ օրինակ.

Անցեալ դարու վերջերը, երբ կաթոլիկ կղերը կրկնապատկել էր իւր ջանքերը աշխարհիս անդրանիկ քրիստոնեայ ազգի՝ հայերի մէջ քրիստոնէութիւն տարածելու՝ որպէս հեթանոսների մէջ, լոյս տեսաւ Վենետկի Մխիթարեան հ. Միքայէլ Չամչեանի եռահատոր Հայոց պատմութիւնը. ինչպէս յայտնի է կաթոլիկութիւնը՝ ջատագովւում է և բարձր ի գլուխ պանծում այդ աշխատութեան մէջ։ Այդ պատմութեան վերայ 1791 թուին Հնդկաստանի Մադրաս քաղաքում մի քննութիւն ապուեց առանձին գրքոյկով, որի մէջ ցոյց է տրուած Չամչեանի բազմաթիւ սխալները թէ ազգային և թէ եկեղեցական պատմութեան վերաբերեալ. այդ գրքոյկի մէջ հեղինակն, ի միջի այլոց, ուղղում է Չամչեանի սխալները Յովսէփ Արղութեան արքեպիսկոպոսի վերաբերութեամբ։ Չամչեանը, հայ կաթոլիկ եկեղեցու ժամանակակից այդ նշանաւոր ներկայացուցիչը փոխանակ նրան միջոցով պատասխանելու և ըստ իւր համոզման ճշմարտութիւնը պաշտպանելու՝ ուղղում է Յովսէփ արքեպիսկոպոսին հետևեալ՝ յուտանքներով լի անստորագիր նամակը. *)

«Ի Նուաստ անձնէ Գալուստ անուն մեղապարտ դպրէ, համբոյր Տիրանուէր Աջոյ մեծապատւի (Փիլանիդ). Առեալ զլուր բարեկի համբաւոյ ձերումդ վեհութեան ուրախ եղէ ընդ շքեղութիւն փառացդ. որ տարածի ձեօք և եթ զձէնջ զրով և բանիւ. այլ խառնի տրտմութիւն յուրախութիւն իմ ընդ հանգամանս անփառութեան իրացն, որ յականատեսից անպատրուակ պատմի. թէ ի նախանձուէ իցէ, մարթէ կասկածել. թէ ստուգութեամբ, չէ պարտ վստահել. թէպէտև հնչմունք գովութեան ձերոյ վկայեալ զանձնէ ի ձերոյին գիրսդ զնոյն առաւել ճշմարտութեամբ հաստատել, առ ի զրգելոյ ձեր ի բարեյաջողութենէ այլոց. Տակաւ դատարկ, ի բաղխելն թնդաձայն հնչէ, այլ կարաս լի, անձայն դադարէ. Ընթերցայ զթուղթ տպագրեալ ի Մադրաս ցամի 1791. և ի հայոց ՌՄԽ. և տեսի ի նմա գրեալ ինչ ինչ ընդդէմ պատմութեան հայոց. և նախատինս ծանունս յոյժ յոյժ ընդդէմ յօրինողի նորին. Գրեալ ես վրիպակ ի վերջ երրորդ հատորին, և եղեալ ես ի թղթիդ երես 33. յայտածելով թէ նա այլազգ իցէ եղեալ

*) Տես «Արձագանք» № 30։

[1]) Թէ որ աստիճան հայը, կաթոլիկական դաւանութիւնն ընդունելով օտարանում է հայութիւնից՝ ցոյց է տալիս հետևեալ դէպքը.—քառասնական թուականներին Իսպահանում մի հայ կաթոլիկութիւն է ընդունում. Նորադարձ պապականն այնպիսի մոլեռանդութեան է հասնում, որ սափրիչ է կանչում իւր թևից արիւն առնելու և ասում է. «...», անշուշտ կարծելով թէ մի գրգալ ապականուած արիւնի մէջ է պարունակւում ամբողջ հայութիւնը…

*) Այս գրութեան երկու օրինակ ունինք, առանձին առանձին թղթերի վերայ, մանր տարբերութիւններով։

*) Նամակի ճակատին փակագծիների մէջ գրուած է հետևեալը. «գրութիւն Չամչեան Միքայէլի առ սրբազան Վէհն Յովսէփ»։

երկրորդ անգամ ամուսնանալու համար խնդրած արտօնութիւնը զլացուած էր ցարդ Պատրիարքարանէն. թէեւ այդ գայթակղական բաժանումէ ի վեր 7 տարիներ անցած են։ Երիտասարդ բժիշկը յուսահատուող մարդ չլինելով իր խնդիր մանրամասն տեղեկագրով ներկայացուցեր է վերջերս ամենայն Հայոց Վեհ. Հայրապետին։

Երկու շաբաթի չափ յառաջ Ամենայն Հայոց Հայրապետի վճիռը եկած է Տօքթէօր Մինէճեանին։ Նորին Վեհափառութիւնը կ'իմացունէ, թէ խնդիրը իր ամեն հանգամանքներով Ս. Էջմիածնի Սինոդի քննութեանը ենթարկած էր և այժմ իր հայրապետական իշխանութեամբ կարտօնէ իրեն երկրորդ անգամ ամուսնանալու. իսկ իր նախորդ կին կը դատապարտէ Ս. Պսակի խորհրդի օրհնութենէն զկեանս զուրկ մնալու։ Վեհ. Հայրապետի վճռագրի մէկ օրինակն ալ Կ. Պոլսի պատրիարքարանին հաղորդուած է։

(«Արևելք»)

***

Մեզ հաղորդում են որ Թեմիս սրբազան առաջնորդը քաղաքիս առաջին մասի գործակալ Յովհաննէս քահ. Մարտիրոսեանցին արձակելով այդ պաշտօնից՝ նորա փոխարէն բարեկարգիչ է նշանակել Գիւտ քահ. Աղանեանցին, որ միևնոյն պաշտօնը վարում էր և 1886—7 թուերին սրբ. Արիստակէս եպիսկոպոսի առաջնորդութեան օրօք։

***

Թեմիս սրբ. առաջնորդը քաղաքիս մի քանի ձեռնհաս քահանաներին յանձնել է մի ծրագիր կազմել Թիֆլիզի եկեղեցեաց դպիրներին կրօնական ուսմանց մէջ վարժեցնելու համար։ Նորին Սրբազնութիւնը մտադիր է այդ նպատակի համար երեկոյեան դասընթացներ բանալ քաղաքիս եկեղեցիներից մէկի գաւթում։

***

ՆԱՄԱԿ ՍԱՉԽԵՐԻՑ

—

Պ. Խմբագիր

Ցանկանալով Սաչխերէթ գիւղի նորաբաց դպրոցի համար, հիմնել գրադարան, ուր ուսանում են տեղիս վրացախօս հասարակութեան վրացախօս երեխաները, և ի նկատի ունենալով դպրոցի սուղ միջոցները, սրանով խոնարհաբար խնդրում եմ յարգելի պ. պ. հեղինակներին, թարգմանիչներին և առ հասարակ բարեգործ անձերին օգնութիւն հասցնեն գրադարանի հիմնարկութեանի գրքեր նուիրելով։

Ցանկացող նուիրատուններն իրենց նուէրները կարող են ուղարկել հետեւեալ հասցէով.

Ст. Квирилы (З. Ж. Д.) Мѣс. Сачхери, учителю Маркару Саатянцу.

Ուսուցիչ՝ Մարգար Սահաթեանց։

***

Տիկին Տէրեան-Կորդանեանը ահագին յաջողութիւն ունեցաւ մարտի 14-ին թէ իբրև Սանտուցա (Cavalleria Rusticana), թէ իբրև Մինիօն։ Մեր գեղարուեստական աշխարհում այս հազուագիւտ ներկայացման մասին մենք կը խօսինք հետևեալ համարում։ Թատրոնը ծայրէ ի ծայր լիքն էր. Կարսի նահանգի կարօտեալ գիւղացիներից շատերը ի բոլոր սրտէ կ՚օրհնեն ազնուասիրտ տիկնոջ։

***

Մեզ խնդրում են հրատարակել հետևեալ հաշիւը այն պարեերեկոյթի և նուագահանդիսի մասին, որ տեղի ունեցաւ փետրվարի 26-ին Թիֆլիզի ժողովարանի դահլիճում յօգուտ Սօլօլակի Ձրի ճաշարանի։

Տոմսակների վաճառումից ստացուել է 1187 ռուբլի և պրեմիաներ 116 ռ. 60 կ. ընդամենը 1303 ռուբլի 60 կոպ.։

Ծախս եղած է ընդամենը 248 ռուբլի 60 կոպ., այն է տոմսակադրոշմի—56 ռ. 60 կ., կոտիլիոնի համար նշաններ 16 ռուբլի, յայտագրերի, տոմսակների և լրագիրների յայտարարութեանց տպագրութեան—17 ռուբլի, ժողովարանի ներկայացրած հաշուով 128 ռուբլի, շվէյցարներին—6 ռ., հատուցուած է երաժշտական ուսումնարանին—25 ռ.։

Զուտ եկամուտ մնացել է 1055 ռուբլի։

Երեկոյթ կազմակերպող տիկ. Մարիամ Ծովիանեանը իր խորին շնորհակալութիւնը մատուցանում է այն բոլոր անձանց, որոնք մասնակցել են և նպաստել երեկոյթի յաջողութեան։

***

Թիֆլիզի հայոց հրատ. ընկ. Վարչութիւնը խնդրում է մեզ յայտնել, որ յունվարի 16-ին Թիֆլիզի ժողովարանում տրուած պարահանդէսից ընդհանուր մուտք է եղած 1248 ր. 38 կ. իսկ ծախք 387 ր. 88 կ. զուտ արդիւնք մնացել է 860 ր. 50 կ.

Նոյն Ընկերութեան Վարչութիւնը խնդրում է յայտնել որ արդէն մամուլին է յանձնուած և շուտով լոյս կը տեսնի Պակրովսկու «Հոգատարութիւն երեխանց» գրքոյկը։

***

Ս. ԷՋՄԻԱԾՆԻՑ մեզ հաղորդում են, որ սինոդը ի նկատի ունենալով Կումսու գործակալ արժ. Նիկողայոս քահ. Երզընկեանի անհարազատութիւնը դէպի ս. Էջմիածնայ շահերը՝ արձակել է նորան գործակալութեան պաշտօնից և միանգամայն դադարեցրել քահանայագործութիւնից։

***

Թիֆլիզի օսմանեան նախկին ընդհանուր հիւպատոս Հասիբ-Բէյը, ինչպէս հաղորդում են Կ. Պոլսոյ թերթերը, նշանակուած է Թեհրանի օսմանեան դեսպանատան խորհրդական։

***

ՂԱԼԱՃԷԻ՝ ՄԵՐ ՅԱՏՈՒԿ ԹՂԹԱԿՑԻ ՆԱՄԱԿԸ *)

—

Գիւղացոց մէջ մի քանի օր մնալուց, աղքատին ու հարստին լաւ ճանաչելուց յետոյ եկայ այն եզրակացութեան, որ կարիք չկայ ուտելու և հագնելու համար աւելի դրամ բաժանել։ Ուտելիքն էլ ունէին, լաւ թէ վատ հագնելիքն էլ, այս ու այն կողմից էլ շորեղէններ պէտք է ղրկուէին. իմ տարած փողից վճռեցի 400 ռ. յատկացնել եկեղեցու, դպրոցի շինութեան։ Ժողովուրդը անհուն սիրով ընդունեց այդ որոշումս, մանաւանդ երբ յայտնեցի, որ նրանց եկեղեցու և դպրոցի անունով Թիֆլիզում էլ փող է ժողովւում, նրանք մխիթարուած գոչեցին. «Աստուած կեանք տայ այդ մարդկանց, որոնք չեն ուզում, որ մենք հայ քրիստոնէութիւնից ընկնենք, մեր երեխէքն էլ ուսումից։

Վարժապետ մարդ ես, կիմանաս թէ ինչ չարչարանքով է գլուխ գալիս ուսումնարանի շինութիւնը։ Քսան տարուայ մէջ զոռով էինք թամամացրել։ Քարն ու կիրը էն կողմը մնան, տախտակը հէնց Բաղուլցնենք բերել արել։ Աստուած ինչի ջիգեարներս փոթթեց»։

Այսպէս խօսում էին քէչ շատ գրագէտ գիւղացիք, որոնք միայն չորս փող էին տուել դպրոցի շինութեան համար. իսկ անգրագէտ երկրագործները, որոնք մշակութիւն անելով ձեռքները փշտացրել էին, աւելի էին մորմոքւում. «բստրանա ետնը հօվ ա շինըլական սումարանը. արհամ մըղանայ ումուդ չկայ։ Վերէտ «Ըլձըկանքին» խմպակիրը փոլ հըրքիան ետնա կլէօխ քաշի, մեր սումարանի շինութինը սղըցընի—ընտրանայ ետնը մեզ էօլում չկայ։ Մին պէծի վախտան ետնը մունք աղճիկ վրժապետ էլ կըպիրինք խօխաքխճկօրանց մըհար։ Մունք մեզ եօլա կըտանինք, կեառունքըհան կինինք. հինչ վեր ազկի մէջ փոլ ա հըսքըլմ մըր ըսըմաւ, թող ժամին ու սումըրանին երայ պըրցընին։ Չինքի տէւ վրժապետ ըս, քի սումըրանի մըհար ենք խնթըրում, վեր իըմըրակլըլըն ասես»։

Եթէ կրակը Ղալաճէի տներին դիպած լինէր, եկեղեցին ու դպրոցը անվնաս թողած, բայց բնակիչները իրանց նպաստները եկեղեցուն ու դպրոցին յատկացնէին, նրանց բարեկարգութեան վրայ մտածէին, ամենքն էլ զարմանալով կասէին—ահա հրեշտակներ, որոնք երկրաւորը թողած երկնաւորի վրայ են հոգս անում։ Եթէ ես Ղալաճէ մտնելով տեսնէի, որ գիւղն ու գիւղացիքը կրակի ձեռից սովալլուկ են, իսկ եկեղեցին ու դպրոցը իրանց տեղը անվնաս մնում են, բայց ես հազարներ տանելով ասէի գիւղացոց. դուք ոնց լինում է, ապրեցէք, ես հետս փողերը պէտք է նուիրեմ ձեր եկեղեցուն ու դպրոցին, ամենքն էլ իրաւունք ունէին ասելու. ինչ ժամանակ է ժամն ու դպրոցը զուարթացնելու, քանի որ ժամուորները, մանուկները սովից կոտորւում են։

Բայց երբ մարդ տեսնում է որ Աստուծոյ և լուսոյ տաճարները՝ գոհ գնալով գիւղացոց անզգուշութեան ողբալի վիճակում են, քան թէ իրանք գիւղացիք, ինչպէս անտարբեր սրտով նայի, ինչպէս չյարգէ այն մարդկանց փափագը, որոնք ժամի ու բարեպաշտութեան զուգահաւասար ուսումն ու դպրոցն են սիրում։ Ի՞նչպէս բոլոր ուժով չմաքառէի ես հէնց Ղալաճէում այնպիսի մարդկանց, որոնք ռահամ ժողովրդի պարզ սրտերը աշխատում էին պղտորել։

Այդպիսի պորտաբոյծ, կռապաշտ (այսինքն իրանց անձը պաշտող) աբաբծներ ո՛ր գիւղերում չկան, որոնք միամիտ ժողովրդի միամտութիւնից օգուտ քաղելով՝ դրան քարն են քըսում, տունը գլխին բըւշակ անում։ Իսկ երբ վշտահար ժողովուրդը իւր դժբախտութիւնների միակ աղբիւր, տգիտութիւնը հասկանալով, հեղհէնի արհաւրալից ժամին անգամ «դպրոց» է կանչում և նրա նորոգութիւնը խնդրում ազգայինների նուիրած կոպէկներով, սրանից էլ ուրախաւիթ երեւոյթ ո՞րը կլինի։ Ի սէր Աստուծոյ, խելառն ո՞վ է. արդեօք Ղալաճէի վարնոդ ժողովուրդը, որ իրան նուիրած փողի մի մասով ուզում է իւր դպրոցը, ժամը նորոգած տեսնել, թէ՞ այն մարդիկ, որոնք առաջարկում են՝ փողը միայն պարարել, անձը զուգել։

Մնում էր մօտս 600 ռ. որոշեցի բաժանել այն աղքատներին, որոնք կրակից վնասուած են՝ անշուշտ խնամ և դարմանի կարիք ունէին։ Ժողովրդի մէջ խլրտում գցողները մի քանիսն էին, որոնցից մինը իւր երկյարկանի տան համար 2000 ռ. էր ուզում, միւսը իւր գոմէշի գինը՝ 100 ռ. և բոլորը իւր ազգականի գլխագինը, ինչ գիտեմ՝ քանի հազար։ Ամենքն էլ այրուած ունէին, ամենքն էլ կորցրին իրանց վնասը սաղանար. բայց ընթերցող, քեզ եմ հարցնում, հօրից, ո՞ր ձորից։ Իրանք էլ էին գուժ որ անկարելի է այդպիսի անխելք պահանջներ անելը, եթէ իրանց գիւղի կրակն է լափել, ուրիշ գիւղեր կարկուտը, մորեխն է տանում, նրանց ո՞վ է վճարում։ Ուստի սխեցին աղքատների ցուցակը կազմել։ Մեկ կազմածին չհաւատալով, հինգ հոգի ցուցակ կազմել տուի զանազան դասակարգի մարդկանց ձեռով, որ երկու չլսեն։ Այդ ցուցակները քահանաների ներկայութեամբ ստուգելով բոլորի ընխեղճ ծերունիների մասնակցութեամբ բաժինները որոշեցի ու բաժանեցի հետևեալ բանախօսութեամբ։

«Սիրելի ժողովուրդ, Հոգևոր Տէր Նաւասարդի համար ձեզ խարջլուդ ուղարկել (այդ ազգային տօնի նախընթաց օրն էր)։ Շուտով էլ կարգադրի, որ ձեր ժամն ու ուսումնարանը շինուի։ Ծախսի մեծ մասը ուրիշները կը տան, ձերն այն լինի, թէ և մշակութիւն անէք եկեղեցու վերայ։

Նրանք հազար բերան օրհնեցին Հոգևոր Տէրին և նպաստ ուղարկող բարեսիրտ հայերին։ Հրկիզեալները խոստացան ոչ միայն մշակութիւն անել եկեղեցու և դպրոցի շինութեան վերայ, այլև նուէրներ մէջ մասնակցել։

Դպրոցի և եկեղեցու անունով վերցրած 400 ռ. առաջ մտադիր էի թողնել Ղալաճէում, բայց չթողի հետևեալ պատճառով։ Դեռ Թէֆլիզում լսել էի, թէ այնտեղ մասնաժողով կայ, գործ է շինում։ Հասնելով հարցուփորձ արի, տեսայ ոչինչ չկայ, բացի երեք հոգուց, որոնք իրանք իրանց վէքիլներ են անուանել առանց ժողովրդի համաձայնութեան։

*) Տես «Արձագանք» № 30.

զմականունդ հանդերձ հայրենեաւդ և զամիս հիմնարկութեան նորաշէն քաղաքիդ. կարծեմ թէ վասն այդր շնորհակալ լիցի նա զձէնջ. զի զոր սխալեցաւն ուղղագրեցիք. ես և փափագէի գտանել վրիպակս գրել առ նա զի ուղղեսցէ։ Վրիպեալ նորա յայսմ, յայտ է թէ լեալ է ի գրելոյ այլոյ առ նա, զի ըստ վկայելոյ նոցա եղեալ է զայն զմականուն նախընթացին յաջորդի տալով. բայց ըստ իմ կարծեաց բարւոք ես գիտաւ այս. զի մի գերամբարձ անուն ձեր ի գիրս նորա ունիցի յարմար տեղի։ Իսկ զոր գրեալ ես թէ ի պատմութեան անդ կայ այս ինչ, և այն ձերումդ գիտման ընդդիմակայ, այդ ի վեր է քան զհաստատութիւն արհեստի վեհափառութեանդ. շատ էր զմականուն ձեր միայն հնչակ հարկանել. և զհիւղս ձեր պանծացուցանել. Զի՞ կայ քո և այնր որ ի վեր է քան զկար քո։ Ասէ առակն, Ապեղես նկարիչ յօրինեալ պատկեր ընտիր կանգնեաց ի հրապարակի, ոչ զի զովելի ցուցցի. այլ զի ըստ դատելոյ տեսողաց ի վրիպանաց ուղղեսցի. որոյ աղագաւ զօղեալ՝ ի չետուստ ուշ դնէր զինչ ասիցեն որք տեսանէին. եկն անդ կօշկակար մի՝ և տեսեալ զսխալանս ի կօշիկսն, ասէ վրիպեալ ասա նկարիչն. ուղիղ դատեաց Ապեղէս զբան նորա. զի չիրաւ էր, սկսաւ կօշկակարն արատս գտել և սրունից պատկերին. և ապա միջացն լանջաց՝ որպէս թէ չիցեն ըստ արհեստի։ Յայնժամ ի դուրս երևեցուցեալ Ապեղեայ զանձն՝ ասէ՝ կօշ'կակարն մի՛ դատեսցէ ի վեր քան զհողաթափն։ Ապաքէն ուղղագրեցիք զհողաթափին, շատ լիցի ձեզ, մի՛ ևս ի վեր ելանէք. ապա թէ՝ ի նոյն ցուցջիք յանս. երկնչիմ թէ ելցեն ջատագովք և ցուցցեն ձեզ զգրիչս իւրեանց, որպէս և ցուցցին ոմանց, և աճաբեկ արարին, յորմէ կամելով իմ զգուշացուցանել զձեզ՝ զայս համառօտութիւն ընծայեցի բարձրութեանդ ո՛ղջ լեր»։

Հայոց Թիւն ՌՄԽԲ.

«Եւ արացի Դ.»

Ստանալով Յովսէփ արքեպիսկոպոսը այս անստորագիր գրութիւնը, որի մէջ հեղինակը յարձակվում է մի բարձրաստիճան հայ եկեղեցականի վերայ, որ այդ միջոցին ամբողջ Ռուսահայերի առաջնորդութեան պաշտօն էր վարում, ինքն ևս Հ. Մ. Չամչեանին հետևեալ անստորագիր պատասխանն է ուղղում. *)

«Ի չետնեալ անձնէ Պետրոս սնունդ տրուպ դպրէ՝ մեծանուն Գալուստ դպրի, զգալի տեսութեամբ անծանօթ եղելոյ խնդալ։ Յառաջ քան զանձին և զգիտութեան զհանգամանս արդեանց համբաւոյ՝ առնուլն եմ, սխտակիր փքացման անբարի բարուցդ ի գրութենէ անտի որ առ բարձր Սրբազնութիւնն՝ բանիւ և արդեամբ գերափայլեալ Տեառն Յովսէփայ կայսերապսակ եռերջանիկ Առաջնորդի և նուիրակի, ծանեայ զորպիսութիւն, զի այր ի նամակէ իւրմէ ճանաչի. ստոյգ է անդրադարձն մտաց գրուածոյդ. զի պարկ դատարկ ևս տարուբերելն անհնչիւն մնայ, իսկ լցեալն ոսկւով՝ մեծաձայն հնչէ։ Թէև այն հրնչիւն՝ ախտացելոյդ զալուտ փարիսական՝ ինքնագովութիւն լիցի վարկանել, որպէս երբեմն առ Փրկիչն՝ ի քոյդ սակի եղելոցն՝ օտարացելոցն ի մօրէ, լսափելոցն յարգանտէ, և խօսողացն զսուտ՝ անպատկառ յառաջարկութիւն, թէ դու վասն անձին քո վկայես, և վկայութիւն քո՝ չէ ճշմարիտ։ Զի թէ սակս տարաբնակ լինելոյդ իցէ այդ անխոհեմ կարծիք, և թէ այլ ընդ այլոյ՝ գլուխ յայլոց առնլոյդ, սակայն՝ այսու ամենայնիւ չէ կարելի մնալ անբասիր. զի կուրաց արեգակն ոչ ծագէ և ոչ մտանէ։ Վասն իմ սրբազան զմեծագոյն աշխատանսն՝ առն երեւելւոյ՝ բանասիրի չամչենի, ոչ միայն գովէ՝ այլ և ի դպրատան իւրում, զնօրին քերականութիւնն, իբրու անսխալիւր շաւիղ և անպակաս կատարելութիւն այնր արհեստի, բնաւից աշակերտելոցն պատուիրանաւ յառաջարկէ. իսկ ի չընթացս պատմութեանն հայոց՝ ըստ որում հեղինակն շեղեալ ի լոսոմանէն՝ զկնի ցուցանելոյ զհայկազանցն լուսաւորչակրօնից՝ անսողիւտ ճշմարտութիւն ի հարկաւորութիւն նկատման փափական ակնարկութեանն անկանի՝ հոգով չափ ցաւի, թէ զհարդ այսպիսի այր մեծավաստակ, զգորտ ապխտացեալ ըստ առից մագիստրոսին Գրիգորի, ձուկն կարծելով ձայնէ վաճառել։ Իսկ որ ինչ՝ սակս հիմնարկութեան նորոյն Նախիջևանու, և մեծի արփիափայլ ազգաբանութեան սրբազան վեհին իմոյ՝ է վրիպակ հեղինակին, անկարծիք գիտեմ, զի և նոյն ինքն բղձայ ուղղելն։ Բայց ափսոսամ ի վերայ մանկական անկատար մտախոհութեանդ. զի զյօրինողի մատենին՝ զբազմամեայ աշխատանսն՝ միով բանիւ ջանաս ունայնացուցանել, զտեղի յարմարական ի տապանա'կի անդ տախտակին կտակաբանաց, ծաղկեալ զաւազանին աճարօնի և լի մանանայիւ ոսկեայ սափորոյն ոչ ունելն՝ բարւոք գիւտումն կարծելովդ։ Արդարև ասեմ քեզ հայեաց ասաց առօգք, և տես զի ի դարս դարս ժամանակաց՝ զկնի Սրբոց Թարգմանչացն մերոց՝ ոչ ոք գտաւ հաւասար կայսերապսակ սանս Աստուծոյ, որ սակս պայծառութեան ընդհանուր ազգիս՝ այսքան ունիցէր ջանս, և Տէր այսպիսաբար յաջողիցէր ի ձեռս նորա՝ զի եթէ զսրբոյն Ներսիսի Լամբրոնացւոյն ասիցես, նա ի կայսերականն դիմեալ ի դուռն՝ ամօթով դարձաւ չետս, որպէս ի պատմութեան անդ տեսան'ի. իսկ սա՝ քանիցս առ ամենազօր օգոստափառ Կայսերուհին դիմեաց, եղիտ սակս ազգին պատիւս անճառելիս և փառս անզուգականս. և սակս ինքեան ըստ արժանւոյն զպսակս. որով և բոլոր ազգն եղև պսակաւորեալ։ Եւ որ գրեալն էիր՝ ի վեր քան զկարն հասողութեան արհեստի զոլ նորին բարձր Սրբազնութեանն, դատումն ինչ ինչ ընդդիմակ բանից ի մատենի անդ նովաւ տղայական անիմաստ վարժմամբդ՝ իմաստուն զքեզ կարծելով, զհրէախօհ գոյդ ծանուցեր. քանզի և նոքա առ ամենակարն քրիստոնէական բարբառով ասէին, ոչ կարէր սա որ երաց զաչս կուրին՝ առնել զի և սա մի մեռցի»։ Այն զի ծանր էր ինքեանց և տեսանելն զնա, զարմանամ ի վերայ տղայամիտ իմաստակութեանդ զհարդ ոչ ի միտ առեր ճանաչելով զչափ անձինդ թէ՝ անհնարին է կուրաց զզունոց տրամաբանել, և այնպէս զլայնատարած ընդարձակութիւն սրտին, և զմտացն առատութիւն ընդ մեծի կըրթեալ ներհուն մակացութեանն նորին բարձր Սրբազնութեան, ի չափ և ի կշիռ պարուրել յանդգնեցար, արդարև ըստ քումդ գրութեան կօշկակարդ ի վեր քան զարհեստդ պահանջումն բըդատողութիւնդ ձգտեցուցանելով, որպէս թէ աչք ջղջիկանի և բուոյ ի քննութիւն ամենափայլ լուսոյ ականն աշխարհի ժպրհիցի։ Ապաքէն՝ որ ի բարձունս զքար ձգէ ի վերայ գլխոյ իւրոյ անկցի։ Եւ զի՝ յանալի գրութեան քում, զկիրս երկիւղի ունել՝ սակս կայսերապսակ վեհին իմոյ՝ զքէն գրեալ էիր, թէ զուցէ ելեալ ջատագով ոմանք՝ զգրիչս իւրեանց ցուցցեն. և որպէս զայլսն աճաբեկ արասցեն, անհետասցի այդ տարակոյս տատանական յանխոհեմ մտաց քոց. զի ո՛չ ոք ի նոցանէ կարէ լինել Աղէքսանդր, և ոչ ի մէնջ Դարեհ նա զի՝ նախ քան զհարթել գրչին այնց՝ ոչ միայն անյաղթահարելի կայսերական Մեծութենէ ամենայն ռուսաց և բոլոր չերեւելի հոյակապ արանց Նորին Տէրութեանն՝ անջնջելի գրչաւ կայ դրոշմեցեալ վեհանձնութիւնն ըստ սքանչելի իմաստութեանն նորին բարձր Սրբազնութեանն ռուսաց երկրի եղեալ ամենայն կաթօլիկաց՝ բարձր Սրբազնագունեղ ըստանխրպաւուս յՆր.ք Եպիսկոպոս Սէստրոնչէվիցէն. (որ նստի ի Մակիլով) բանիւ և զանազան գրուատիք գրութեամբ մեծապէս հռչակել։ Իսկ եթէ երկնչիս թէ զուցէ աճաբեկ արասցեն զանսասանելի սիւնն հաստատութեան, ափսոսամ սակս տղայամտութեանդ, զի ո՛րդ ի քոյդ ոչ լինայեալ յանասնեղէնն իջուցեր յատեճան. զի աճաբեկելն զոք, մանաւանդ զազանաց է գործ քան մարդկան բանեղինի. բայց՝ մեք ոչ երկնչիմք ի նոցունց։ Քանզի փորձիւ գիտեմք թէ՝ ամենայն արջք, փիղք և գազանք, և խիստ համայն կենդանիք, ընտելացեալ ժամանակաւ, մարդկան լինին ընտանիք։ Այս քանս քեզ յատկապէս ի լսրատ գրեցաւ, որով եթէ ըստ գրութեան մագիստրոսին զթշուառութիւնն թողցես, ընձեռեցից քե՛զ յայտնի և լուսաւոր բան. և ի չափ անից և թափեցից զքեզ ի վերջին տգիտութենէ բաւ է։ Ի թուին հայոց ՌՄԽԳ, մարտի ԺԳ. յԱժդարխան գրեցաւ աստապատցի Տէր Յակոբեան ի Պետրոս դպրէ. խնդրեմ ի քէն, զի ըստ այսմ և դու յայտնապէս գրիցես զտեղիդ ընդ անուանդ» *)։

Ընթերցողն անշուշտ զայրացաւ կարդալով այս նամակները, որոնց ոճը այնքան հեռու է ընդունուած քաղաքավարութեան ձևերից և որպիսի զէնքով կըռուելը միշտ անպատիւ գործ է համարուած և փոքրոգութեան նշան։

Չնայելով, որ կաթոլիկ կղերը այս և նման միջոցներով ճգնում էր Հայ ազգային եկեղեցու հիմքը փորել, սակայն այն աներևոյթ Աջը, որ միշտ պահպանել է Հայաստանեայց ս. եկեղեցին ամեն տեսակ ոտնձգութեանց դէմ, որ ի պաշտպանութիւն այդ եկեղեցուն յարուցել է Տաթևացիներ, Որոտնեցիներ և այլ քաջազգի աստուածաբան վարդապետներ, յարոյց նոցա դէմ քաջամարտիկ ախոյեան Սիմէոն կաթողիկոսին, որ մի եռանդուն ճակատամարտ մղեց կաթոլիկութեան և նորա քարոզչաց դէմ։

Ցաւալին այն է սակայն, որ այս անգամ Ֆրանկ պատեր քարոզիչները, կամ ինչպէս Յիշատակարանիս գրողը անուանում է նոցա՝ Ալթարմայք կամ լօթրանները յաջողեցան իրանց կողմը ձգել քանի մի անարժան հայ եկեղեցականներին և սոցա միջոցով ազդել միամիտ հայ ժողովրդեան սրտերը։

Դոցանից մի քանիսները յիշել այստեղ աւելորդ չենք համարում։

Գողթնոյ վանքի առաջնորդ Յուհան վարդապետը։

ա) Նա սրատաւորել էր մեր ուղղափառ սուրբ հաւատը, յայտնի «աղթարմայութիւն» էր անում և այդ աղանդի հետևողներին չէր արգելում, այնպէս իւր թեմի ժողովրդեան մեծ մասը գիր թէ դաւանութիւնը փոխեցին, նոցանից շատերին ինքը քահանայ ձեռնադրեց։ Եւ այն աստիճան յանդգնութեամբ յամառել էր այդ «աղանդի» մէջ, որ երբ իւր վիճակում մի որ և է գիւղ էր գնում, ուր հայեր ու աղթարմայք միասին էին բնակւում, ինքը եկեղեցում կանգնած՝ ականատես էր լինում, թէ ինչպէս մի դասում «Սուրբ Աստուածը» ըստ հայ եկեղեցու դաւանութեան՝ Խաչեցար ով էին երգում, իսկ միւս դասում ըստ կաթոլիքականի՝ առանց Խաչեցար-ի և այդ տեսակ կրօնական զեղծումներ տեսնելով իւր աչքի առաջ՝ ամենևին ձայն չէր հանում, իսկ նոցա, որոնք նկատում էին իւր այդ վարմունքը և ընդդիմանում սպառնում էր մահուան պատժով։

բ) Չորս կաթուղիկոսական վիճակներն էլ (ս. Էջմիածնի, Կիլիկիայի, Աղթամարի և Աղուանից) ժողովարարներ էր ուղարկում իւր կողմից և գանձանակներ հաստատում, և այսպիսի միջոցներով յանուն վանքի կեղեքում էր ազգին և ստացած բոլոր եկամուտը ինքն ծախսում։ Այդ գումարներից մի մեծ մասը տալիս էր տեղւոյն բռնաւոր Ալաղ բէգի որդի Մախսուդ բէգին, որ միշտ բարեկամ մնայ իրան, որի շնորհիւ ստացել նա իւր առաջնորդական պաշտօնը։ Այսպիսի եղանակով և մեծամեծ գումարներ ծախսելով յաջողեցնում էր նա ցանկացած ամեն տեսակ ֆերմաններ ստանալ օսմանեան պետութիւնից իւր բարեկամ Մախսուդ բէգի համար. այսպէս օրինակ հրաման բերել տուեց բերդ շինել տալու նորա համար և շինութեան անհրաժեշտ բոլոր ծախքերը ինքը հոգաց։ Մի քանի անգամ նա Բաղէշի խանին փոխել տուեց, որ թշնամի էր եղած իւր բարեկամին։ Եւ երբ այսպիսի շռայլ ծախսերի պատճառով փողը սպառւում էր՝ հայրենի հնութեանց դէտ և պահպան եպիսկոպոսը եկեղեցական սրբազան անօթեղէնները հալելով՝ փող էր դարձնում։

գ) ս. Աթոռից կարգած բոլոր առաջնորդներին ինքնագլուխ փոխում էր՝ կը-

*) Այս նամակի ճակատին գրուած է փակագծներում. «Յովսէփ սրբազանէն առ Միքայէլ Չամչեանն՝ ի պատասխան գրութեան իւրոյ»։

*) Այս երկու նամակների պատճէնները արտագրուած մի թերթ կապոյտ, կոպիտ հաստ թղթի վերայ, որ ապացոյց է բաւական հնութեան, պահւում է մեզ մօտ որ և նոյնութեամբ առաջ բերինք այստեղ. Թուղթը, որի վերայ արտագրած են այդ նամակների պատճէնները՝ գործարանական թափանցիկ նշան ունի, ուր կարողացանք նշմարել 1808 թուականը։

Հաստատուած չեն ոչ մարմնաւոր և ոչ հոգևոր իշխանութիւնից։ Ոչ մատեան ունին, ոչինչ։ Եկեղեցու անունով մտադիր են փող ժողովելու, բայց չեն ուզում Սրբ. Առաջնորդին դիմել, մի ժապաւինեալ մատեան ստանալ։ Իրանց մէջն էլ գիւղի քահանաներից ոչ մինին չեն խառնում։ Գիւղացիք կասկածով էին նայում դըրանց, ուստի փող չտուին։

Գիւղացի հոգաբարձուաց կամեցայ յանձնել ի պահպանութիւն — բայց բանն այն էր որ և հին հոգաբարձութիւնն էր ուզում և նորը։ Հինին արձակել էր Սրբ. Առաջնորդը, նորն ընտրել տուել։

Հին հոգաբարձուք պնդում էին՝ մեզ տուէք փողերը, մատեանները դեռ մեզ մօտ են, Կաթուղիկոսը մեզ է հաստատել չորս տարուց առաջ։ Նորերն էլ պատասխանում էին — իշխանութիւնն այժմ մերն է, Սրբազանը դրանց արձակել, մեզ է ընտրել, շուտով էլ հաստատել կը տայ, մեզ տուէք փողերը։

Ժողովուրդը խնդրեց՝ ոչ նորերին տամ, ոչ հներին, այլ Թիֆլիզ բերեմ — խառնեմ այն փողերին, որ ժողովում են իրանց գիւղի անունով։

Այսպէս էլ արի և չորս հարիւր ռ. յանձնեցի անցեալ դեկտեմբերին Ձեզ։ Մնաց ինձ մօտ վեց հարիւր ռ., որի հաշիւը ահաւասիկ հանդերձ վաւերագրերով, որոնք ստացել եմ Ղալաջէի ծուղրաշուից, քահանաներից, ուսուցչից, հ. գործակալից, գրագրից, հին ու նոր հոգաբարձուներից, երեսփոխանից և այլ գիւղացիներից։

Գիւղացոց բաժանել եմ 410 ռ. 50 կ.
Դպրոցական գործի համար գիւղում վճարել եմ . . . . 65 ռ. 47 կ.
Աշակերտաց գրքեր, դասական առարկաներ ուսուցչի ցուցակի համաձայն . . 59 ռ. 63 կ.
Հանդերձ, նստարաններ, գրքեր տեղափոխելու և ուղարկելու Թիֆլիզից Դեօղչայ . 12 ռ. 76 կ.
ընդամենը 548 ռ. 36 կ.

Նստարաններ և այլ դպրոցական պիտոյքներ գնելու համար ինձ մօտ թողել էք 51 ռ. 64 կ., որ պ. Ս. Խոջայէլեանցի հինգ ռուբլի նուէրի հետ կազմում է 56 ռ. 64 կոպէկ յիշեալ նպատակի համար։

Ընդունեցէք և այլն.

Քամալեանց Ս.

6 մարտի 1894 թ.
Թիֆլիզ։

ՄԱՄՈՒԼԻ ՏԵՍՈՒԹԻՒՆ

*** Յայտնի է, որ մայրաքաղաքի լրագրների մեծագոյն մասը չեն ենթարկւում գրաքննութեան. Հետևեալ օրինակը ցոյց է տալիս թէ ինչպէս է հասկանում այդ ազատութիւնն այն մամուլը, որ յաւակնութիւն ունի իւր մեծութեան բարձրութիւնից խօսել գաւառական թերթերի մասին։ Առաջ ենք բերում «Պետերբուրգսկիյա Վեդօմօստի» լրագրի մշտական աշխատակից պ. Homo-ի պատասխանը «Նով. Վրեմիա» լրագրի յայտնի հրապարակախօս Բուրենինին.

«Դօստոեվսկու մասին իմ գրած յօդուածների առիթով «Նով. Վր.» թերթի երդուեալ պասկվիլեանտ պ. Բուրենինը, որի ճակատին նորերումս մամուլը դրոշմեց «գարշելի սողուն» անունը, երէկ այն թերթում, ուր հիւրասիրութիւն է գտել նա, թափել է աղտոտութիւնների մի կուտակումն։ Ես ի հարկէ չեմ քրքրել այդ գարշակոյտը—այդ ախտահանական կառքի գործն է։ Բայց ի միջի այլոց պ. Բուրենինը իւր ֆելիէտօնում կոչում է ինձ «Կարիէրիստ ստրիճանաւոր, որի հռչակը փոքր ինչ թըրջուած է»։ Այդ մեծ անձնավստահութիւն է։ Պ. Բուրենինը կարող է թրջել... իւր փոխանը, (кальсонъ), եթէ նորան յայտնի է տուալետի այդ պարագան, բայց իմ հռչակը նա բնաւ թրջել չէ կարող»։

Համաձայնեցէք, ընթերցող, որ «Պետեր. Վեդ.» լրագիրը մի տարօրինակ գաղափար ունի մամուլի ազատութեան մասին։

ՄԱՏԵՆԽԱՕՍՈՒԹԻՒՆ

ՄԻ ՔԱՆԻ ՕԳՏԱԿԱՐ ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆՆԵՐ. աշխատասիրութիւն Յմ. Փիրբուդաղեանցի. Բաքու. տպ. «Արօր». 1894.

Խմբագրութեան մէջ ուղարկուեցաւ այս գրքոյկը և նորա հեղինակ՝ պ. Փիրբուդաղեանցի հետևեալ բաց նամակը.

«Գերամեծար Խմբագիր! Սրա հետ ստացէք, խնդրեմ, մի գրքոյկ «մի քանի օգտակար խորհրդածութիւններ» վերնագրով, որը նուաստիս աշխատասիրութիւնն է։ Յուսում եմ Ձեր պատուական շաբաթաթերթի մէջ մին քանի խօսքով էլ է կասէք Ձեր անաճառ և արդար դատողութիւնը այս գրքոյս վերաբերեալ։ Ընդունեցէք» և այլն։

Հարկաւ ամէն հեղինակ իրաւունք ունի խնդրելու որ իւր գործի մասին «անաճառ և՝ արդար դատողութիւն առնեն», մանաւանդ երբ նա կանխագէտ խոհեմութեամբ իւր «աշխատասիրութեան» անունը «օգտակար խորհրդածութիւններ» է դնում։

Չկամենալով որ մեր ընթերցողներն անմասն մնան պ. Փիրբուդաղեանցի ընծայած [illegible]՝ շտապում ենք հաղորդել այստեղ, գէթ համառօտակի, նորա «աշխատասիրութեան» բովանդակութիւնը։

Բայց ինչ էք կարծում, ինչ խընդիրներ, ինչ երևոյթներ են շօշափւում մեր առջև դըրուած «խորհրդածութիւնները»։

Բագուի նաւթի արդիւնաբերութեան և արտահանութեան, թէ՞ Աև քաղաքի մշակների առողջապահական դրութեան վերաբերեալ խնդիրներ. Բագուի ծխաբաժանութեան հարցը, թէ՞ խօլերայի կրկին երևելու առաջն առնելու միջոցները։

Ո՛չ մէկը, ոչ միւսը, ո՛չ երրորդը. պ. Փիրբուդաղեանցի աշխարահայեցողութեան հորիզոնը շատ աւելի լայն և՛ որ աւելի կարևորն է, շատ աւելի բարձր է, կամենում եմ ասել՝ աւելի բարձրաթռիչ է նորա միտքը։ Որպէս զի ստիպած չլինիմ ձեզ միայն հաւատալու իմ խօսքին՝ ես յառաջ կը բերեմ պ. Փիրբուդաղեանցի «խորհրդածութիւնների» առանձին առանձին վերնագրները. 31 էջում զետեղուած են հետևեալ գլուխները Մարդկանց վիճակը անհնարանելի է, Փառասէր կինը իւր կոչմանը չէ ծառայում, Դաժան թշնամին վտանգաւոր է, Մօդան մի մեծ թշուառութիւն է, Անպարկեշտութիւնը (?) շատ տուներ է կործանում, Հայրենի հողը սիրողը դարձեալ մշակ է. մընացեալ երեք վերնագրերն աւելի պարզ, բայց ոչ նուազ խորիմաստ են—Աշխարհասէր, Երկնասէր, Աշխարհքի ունայնութիւնը։

Ինչպէս տեսնում է ընթերցողը, այստեղ ամէն բան կայ, և՛ զուտ փիլիսոփայական, և՛ բարոյագիտական, և՛ սօցիալական, և՛ կրօնական «խորհրդածութիւններ»։ բայց ես վախենում եմ որ ընթերցողներից ամենասրամիտն իսկ դեռ ևս չգիտէ՝ թէ մատենագրութեան կամ գիտութեան որ ճիւղին է վերաբերում պ. Փիրբուդաղեանցի գրքոյկը... Ձեր հետաքրքրութիւնն արդէն շարժուած է, տեսնում եմ, ուրեմն մենք մեր նպատակին հասանք, «խորհրդածութիւնները» ձեր ուշադրութիւնը գրաւեցին, և մենք այժմ կարող ենք ձեզ ասել որ նաւթի ծխի ու մրրի կեղտի մէջ կորած Բագուն միայն մամոնային ծառայողներ չէ ընծայում աշխարհին, այլ և լուսաւոր Պառնասի, գեղեցիկ արուեստի սպասաւորներ։ Այո՛, մեր առջև դըրուած գրքոյկը ոտանաւորների մի ժողովածու է, և վերը յիշուած վերնագրները... այդ ոտանաւորների ճակատներն են զարդարում. եթէ չէք հաւատում՝ ահա հենց առաջին ոտանաւորի առաջին տունը.

Կենդանների մէջ դու մարդ միայն
Իմաստնագոյն ես, ով է քո նման.
Նա ով է կարող որ չգայլեր,
Երբ հանճարներդ աչքով տեսնում էր։

Այժմ, քանի որ դուք համոզուեցաք, որ պ. Խմ. Փիրբուդաղեանցը բանաստեղծ է, այսինքն զանազան բաներ է ստեղծում, այն էլ ոտանաւորով, և քանի որ ամէն գրուած բան ունի իւր ներքին բովանդակութիւնն ու արտաքին ձևը, ես մի երկու օրինակով ցոյց կը տամ ձեզ «խորհրդածութիւնների» բովանդակութիւնը և ձևը, այսինքն պ. Փիրբուդաղեանի բուն [illegible]։

Նախ և յառաջ մատնացոյց անենք մի կարևոր հանգամանք. պ. Փիրբուդաղեանցը յառետես փիլիսոփայութեան, Շոպենհաուէրի ու Հարտմանի հետևողն է, բանաստեղծներից նորա վրայ ազդեցութիւն է ունեցել Լէօպարդին.

Փիլիսոփայութեան կէտից որ նայես աշխարհքի վերայ,
«Տիկնի խաղ է», կասես դու նորան, և «ուրիշ ոչինչ».
Երբ երեխերքոնց ժամանակաւոր խաղն կվերջանայ,
Շատ անգամ կլսես լաց ու աղաղակ նան. գոռ ու կոչ։
(էջ 33.)

Մեր բանաստեղծը մինչ այն աստիճան աշխարհատեաց, կեանքից զզուած մի մարդ է, որ առանց այլևայլութեան իւր ցաւն է յայտնում, որ մարդիկ մեռնելու ցանկութիւն չունին.

Թէ երիտասարդ, թէ միջահասակ, դուցէ ծերունի,
Աշխարհասէր է, [illegible] սէր փափագ չունի.
Հաճոյ է նրան աշխարհքում տասն օր աւելի ապրի,
Քան թէ յաւիտեան Քրիստոսի մօտ ցնծայ ու բերկրի։

Պ. Փիրբուդաղեանը խիստ դառուած խօսում է մօդայի դէմ.

Այդ անզգամը (մօդան) այնքան շատ լիրբ է,
Որ մեռելոց տուն անգամ կմտնէ,
Որ հացկերութեան և թէ թաղմանը
Զքեզ ձև տալու տայ հրամանը։
(էջ 15.)

Մօդան մի սարսափելի բան է, ամէն բան ենթարկւում է նորան. վերջապէս.

Սա տարափոխիկ մի անճար ցաւ է,
Թոքախտ, փորացաւ սորանից լաւ է...
(էջ 16.)

Բանաստեղծը ցաւում է որ «մարդը շատ գիտուն դարձաւ», որովհետև այդ է եղել «անպարզութեան» պատճառը. բայց «անպարզութեան» յառաջացրած փորձանքների առաջն առնելու համար.

Եկաւ սուրբ օրէնք (?), եկաւ և նօտար (?!)
Որ կառավարեն այժմեան վատ աշխարհս։
(էջ 18.)

Ափսոս այն ոսկեդար.
....երբ պարզութիւնը
Ղեկավարում էր ողջ մարդկութիւնը.
Ոչ նօտար էր պէտք և ոչ էլ մուրհակ,
Ոչ վկանելի մի ամբողջ բանակ։

Ախ, անիծեալ մուրհակ, անգութ նօտար, որ հանգիստ չէք տալիս պ. Փիրբուդաղեանցին...

Նաւթի աշխարհքի բանաստեղծը վշտանում է, որ մարդիկ «սկսեցին շինել քաղաքներ և պալատներ. շատերը դարձան վաճառականներ և վաստակեցին շատ անհուն փողեր», որովհետև.

Սրա հետ կորցրին այն խաղաղ կեանքը,
Որ վայելում էր մշակ համայնքը..

և փոխանակ «սոխակի երգը» լըսելու, «բնութիւնը օտար» չհամարելու՝ վաճառականք, երևակայեցէք.

.....Նստած խանութում,
Իր ել ու մուտքի հաշիւն էր տեսնում։

Պ. Փիրբուդաղեանցի այս և սորա նման յայտնագործութիւնները ցոյց տալուց յետոյ մի երկու խօսք էլ ասենք նորա տաղաչափական արուեստի մասին։ Այս կողմից մեր բանաստեղծը արժանի է հայ Պինդարոսների և Անակրէոնների երախտագիտութեանը. նա վերին աստիճանի դիւրին է դարձրել հայկական տաղաչափութեան արուեստը—ինչպէս կամենաք կարդացէք, միևնոյն տողերը կարող էք և իբրև արձակ բան և իբրև ոտանաւոր կարդալ։ Յանգերի վերաբերութեամբ պ. Փիրբուդաղեանը ոչ միայն կարօտ չէ հանգուցեալ հ. Խ. Գալֆայեան—Նար-Պէյի «Յանգարանին», այլ և միանգամայն ճոխացնում է այդ ժողովածուն նորանոր ձևերով. ոչ թէ վանկեր, այլ նոյն իսկ բաղաձայն տառեր միայն բաւական են յանգ կազմելու համար. օրինակ, յանգեր են՝ «կեանք» և «խնլէ», «ձեռ» և «պէտք», «անխիղճ» և «մէջ», «ոչինչ» և «կոչ», «անբաղդ» և «զանգ» և այլն. Նմանապէս յանգեր են՝ «փառասէր է» և «հեռու է», «հետզհետէ» և «խանութ է», «վաստակած է» և «գտնէ» և այլ սոցա նմանները։

Մենք չգիտենք, թէ պ. Փիրբուդաղեանը նաւթի աշխարհքում ինչ պարապմունք ունի՝ ոչ «փիլիսոփայութեան», այլ իրական կեանքի «կէտից», բայց բանաստեղծութեամբ զբաղուելու «կէտից» վատ չէր լինի, եթէ նա սերտէր հետևեալ տողերը.

Былъ бы гусь ты славный,
Если бъ не такой
Былъ ты гусь забавный,
Гусь совсѣмъ смѣшной.

Մ. Տ.

միաբանին գնացող ուխտաւորներին կողոպտում էր և դատարկաձեռն էր ճանապարհ դնում։ Հայրապետական ծաղկեալ և ճանճանչաւոր կոնդակներ էր բաժանում և այլն և այլն։

Սիմէոն կաթուղիկոսը մերկացրեց նորան քահանայական և եպիսկոպոսական կարգից և բանադրանաց թուղթ ուղարկեց նորան։ Յօնանն զգալով ապաքէն իւր յանցանքի ծանրութիւնը՝ զղջաց և դիմելով ս. Էջմիածին՝ ապաշխարեց իւր յանցանքները դառն արտասուքով և արձակուեցաւ բանադրանքից։

[illegible] Պետրոս վարդապետը։

ա. Տիեզերական երեք ժողովների տօներին «Ով հրաշալի նախահարք» *) շարականը չէր ասել տալիս եկեղեցում։

բ. Դեկտեմբերի 25-դ օրը կիւրակի էր պահել տալիս ժողովրդին։

գ. Քառասնորդական պահոց առաջին չորեքշաբթի ապաշխարութեան կարգը չէր թողլ տալիս կատարել։

դ. Ուրբաթ օրը պսակելու հրաման էր տալիս։

ե. Հայոց դատաստանագիրքը չէր ընդունում, այլ ֆրանկներինը։

զ. Ս. Գրիգոր Տաթևացու յայսմաւուրքը չէր թողնում եկեղեցում կարդալ։ Եւ այլն և այլն։

Նախնաւանդ սովորութիւն է, որ ամեն մի առաջնորդ իւրաքանչիւր տարի գնում էր ս. Էջմիածին կաթուղիկոսի մօտ, մանաւանդ երբ նոր է Հայրապետը նստում և ստանում էր ի թիւս այլ հրահանգութեանց և պատուէրների, նաև իւր վանքի համար առաջնորդական և ժողովրդապետութեան կոնդակ, խսկապէս ասելով նոքա նշանակուած լինելով առաջնորդ նախորդ կաթուղիկոսից՝ վերահաստատւում էին նորընտիր յաջորդի ձեռքով իրանց պաշտօնում։ Պետրոսն էլ Սիմէոնի կաթուղիկոսութեան հետևեալ տարին գնաց է Էջմիածին, իսկ նորանից առաջ հասած լինելով կաթուղիկոսին ոմանց ժողովրդականաց բողոքները նորա աղթարմայական ձգտումների մասին՝ պահւում է այնտեղ գործը քննելու համար։ Բայց քննութիւնը և ժողովրդեան ստուար մեծամասնութեան վկայութիւնները ցոյց տուին, որ այն ամեն բողոքագիրները, որոնք հասել էին Էջմիածին այդ առթիւ՝ զրպարտութիւն է եղած ոմանց չարամիտ անձանց կողմից։ Պետրոսն էլ իւր կողմից սրտի զըղջումով հերքեց իւր վերայ բարդած ամբաստանութիւնները և նորից վերահաստատուելով Հայրապետից իւր պաշտօնի մէջ՝ գնաց իւր վիճակը։

Աղթարմաները այն աստիճան զըրուեցրել էին իրանց յանդուգն և աներկիւղ գործողութիւններով [illegible] փաշային, որ վերջինս ստիպուած եղաւ մի օր իւր զօրքով յարձակուել նոցա եկեղեցու վերայ, նոցանից շատերին կապել տուեց և չարաչար ծեծի ու տանջանքի ենթարկեց, ոմանց սպանեց, միւսներին տուգանքի ենթարկեց, բոլոր կաթոլիկ քարոզիչ պատերներին աքսորեց քաղաքից և խստիւ հրաման հանեց, որ ոչ ոք նոցանից չվստահանայ այսուհետև աղթարմայութեան նշան ցոյց տալ, մահուան սպառնալեօք երկիւղի։ Ուստի շատերը նոցանից դարձան մայրենի եկեղեցւոյ գիրկը, գնացին Հայոց առաջնորդին՝ մեղայ գոչեցին և սկսան պաշտել հայաստանեայց եկեղեցւոյ դաւանութիւնը։

Իսկ [illegible] ս. Էջմիածին եկող ուխտաւորները յայտնեցին Սիմէոնին իրանց արտասուելի դրութիւնը, որովհետև իրանք փոքրաթիւ լինելով և խառն ապրելով այլադաւան ժողովրդի հետ՝ յաճախ ստիպուած են լինում խնամութիւն անել նոցա հետ և այսպիսով իրանցից շատերը հակւում են նոցա կողմը հարկից ստիպուած։ Սիմէոնը խստիւ պատուիրեց նոցա հեռու մնալ աղթարմաների հետ հաղորդակցութիւնից։

Բայց ամենից շատ աղմկուած էր Ա[illegible], որ այդ ժամանակ Կարնոյ Կարմիր վանքի թեմ էր համարւում։ Կաթոլիկութիւնը առաւել քան ուրեմն բուն էր դրել Ախալցխայում, տակաւին տասնութերորդ դարուց սկսած։ Նոցա մէջ գլխաւորներն էին՝ Ռոֆիլ, Հերոնիմոս, Վիլհելմոս, Յէղէրիկօ և Ֆրանչեսկո պատերները, որոնց գործունէութեան ոյժ տուեց մի հայ եպիսկոպոս՝ Թօխաթցի Գէորգ անունով (որին յիշատակարանիս գրողը միշտ «չիք Գէորգ» է անուանում)։ Դա նախ՝ վարդապետ ժամանակ Կարմիր վանքի միաբան էր։ 1760 թուին նոյն վանքի առաջնորդ Մշեցի Յակոբ վարդապետի միջնորդութեամբ եպիսկոպոս ձեռնադրուեցաւ Զամխեցի Յակոբ կաթողիկոսից իբրև նոյն վանքի միաբան։ 1764-ին արդէն, Սիմէոնի հայրապետութեան երկրորդ տարին, նա նոյն առաջնորդի հրամանով Ախալցխա գնաց պտղի և այլ վիճակային արդիւնք հաւաքելու համար։ Եւ այդ ժամանակ նա, փոխանակ իւր ստանձնած պարտականութիւնները կատարելու, սկսեց հրապարակ հանել իւր դաւանանքը, որ մինչև այդ ժամանակ ծածուկ էր պահել իւր մէջ, ըսկսեց հրապարակով, դուրսը և եկեղեցու բեմից վատաբանել հայ ազգն և եկեղեցին, եկեղեցում կաթողիկոսի անուան փոխարէն Հռովմի պապի անունը յիշատակել և այլն։ Ժողովուրդը գայթակղուելով այս ուխտադրուժ եպիսկոպոսի վարմունքից՝ իրանց բողոքը շտապով հասցրին կարինեցւոց, որոնք նոյնը մի բազմաստորագիր հանրագրով յայտնեցին Սիմէոն կաթողիկոսին, խնդրելով շուտափոյթ տնօրինութիւն չարիքի առաջն առնելու։

Սիմէոնը տեսաւ, որ ժամանակաւոր և ուղղակի իւրինից գործադրած միջոցներն անզօր են այդ ազգավնաս հոսանքի առաջն առնելու, ուստի կաթոլիքական շարժումը հիմքից արմատախիլ անելու համար Կ. Պօլիս ուղարկեց մահտեսի Յօնանին, որպէս զի նա տեղական հայերի օգնութեամբ Բ. Դռնից մի ֆերման հանէ Ախալցխայի Հասան փաշայի անունով՝ տեղական կաթոլիկներին (յիշատակարանս ամենուրեք «աղթարմայք» է անուանում հայ կաթոլիկներին) իրանց պարագլուխներով հանդերձ աքսորելու և պատժելու համար։ Պատուիրել էր և մի ընդհանուր ֆերման հանել 5 կամ 6 պատճէններով ընդհանրապէս բոլոր փաշաների, բանաւորների ու դատաւորների վերայ, որպէս զի ուր որ գտնուէին աղթարմաներ՝ ծանր լծով ու տուգանքով չարչարեն և այսպիսով վերջ դրուի այդ գայթին եկեղեցու պառակտման։

Յօնանը գնալով Կ. Պօլիս յաջողեցաւ ստանալ մի ֆերման Հասան փաշայի անունով, որով պատուիրւում էր սորան, որ «չիք Գէորգին, Պօղոս և Յովհաննէս ֆրանկ չար սեպղուխների և Ստեփաննոս ու Յակոբ անունով քահանաների հետ» ս. Աթոռն աքսորէ, աղթարմաների երեք եկեղեցիները խլելով հայերին տայ, մեծամեծ տուգանքներ առնէ և պատժէ ամենին։ Այդ ֆերմանը չորս օրինակ էր պատրաստուած, որպէս զի եթէ գլխաւոր յանցաւորները փախած լինէին ուրիշ կողմերը, մի մի օրինակ այդ երկրների կառավարիչներին ուղարկուէր՝ փախստականներին բռնելու համար։

Բայց այդ ժամանակ օսմանցւոց և վրաց (բաշիաչուխ) մէջ պատերազմ բացուէլով՝ Ախալցխայի կողմերը խառն դրութեան մէջ էին և անմիջապէս հարկ չկար այդ ֆերմանները գործադրելու։ Այդ պատերազմում վրացիք մեծ ջարդ տուին օսմանցւոց։ Ախալցխայում օսմանեան կողմից հրամանատար էր նշանակուած Իբրահիմ անունով մէկը, որին Կ. Պօլսի հայ իշխանները խնդրել էին՝ աղթարմաներին վրէժխնդիր լինելուն նպաստել իւրովսանն։

Երբ պատերազմը դադարեց և ժողովուրդը շունչ առաւ, Սիմէոնը մի պատգամաւորութեան ձեռքով (Կարնեցի Սարգիս և Գտաղատցի Գրիգոր վարդապետների) ֆերմանն ուղարկեց Ախալցխա բայց ո՛չ ուղղակի Կարսի վերայով, որ ամենակարճ երթևեկութեան ճանապարհն էր, այլ նախ Կարին, որտեղից պիտի անցնէին Ախալցխա, որպէս զի հայ կաթոլիկները չիմանան, որ ուղարկողը կաթողիկոսն է, այլ գործին աւելի ոյժ տալու համար՝ կարծեն թէ ուղղակի սուլթանի կողմից է ուղարկուած այդ պատգամաւորութիւնը։ Որպէս զի աւելի դիւրութեամբ նպատակի հասնեն՝ կաթողիկոսը հրամայեց, որ այլափոխուած շորերով գնան, Նախապէս աշխատեն շուտով դալսադողի գտնել զայիմի (հրամանատար) տունը և այնտեղ իջեւանեն, տան նորան Պօլսի իշխանների թուղթը, խնդրեն որ երեք սեպղուխներին կապել տայ որպէսզի չփախչեն և ապա ֆերմանը տան։ Առանձին յանձնարարականներ տուեց և Կարնեցի նշանաւոր ազգայինների անունով, որպէսզի մտածեն այս խնդրի մասին և յաջող ելք տան։

Կարին հասնելուն պէս՝ պատգամաւորների առաջին գործն եղաւ յանձնարարականները տէրերին յանձնել և նոցա խորհրդին ապաւինել։ Վերջիններս միասին խորհրդակցելով՝ բարւոք գտան, որ կաթողիկոսը նախապէս գրէ Կ. Պօլիս Պատրիարքին և հայ իշխաններին, որ սոքա արքունի դըռնից մի թագաւորական ծառայ խնդրեն իբրև գործադիր անձն մի նոր ֆերմանով որպէս զի վերջինս ուղարկուած պատգամաւոր վարդապետների հետ գնայ Ախալցխա և ինքը տնօրինէ ամեն բան, որով առաջն առած կլինի ապագայ խռովայոյզ հետևանքների։ Իրանց այս որոշումը նոքա յայտնեցին կաթողիկոսին։

Սիմէոնը բաւականին գրագրութիւններից յետոյ այդ ֆերմանն էլ յաջողեցաւ ձեռք բերել Բ. Դռնից Կ. Պօլսեցւոց ջանքով։ Բայց այդ ժամանակ աղթարմաներն այնպիսի չարագործութիւններ էին արել Կաֆայում, որ մինչև անգամ ուզեցել էին հայոց վեց եկեղեցիքը քանդել, որի համար հայերը մեծ փրկանքով հազիւ կարողացել էին ազատել իրանց եկեղեցիները. ուստի Սիմէոնը 1767 թուին Ախալցխա ուղարկեց մահտեսի Յօնանին հրամանատար Իբրահիմ էֆէնտիի մօտ, որ սա աշտարակէ ստանալ արքունի Դռնից խընդրած ընդհանուր հրամանագիրը։ Յօնանը տարաւ իւր հետ նաև նախկին ֆերմանները կաթողիկոսի գրութեան հետ յանուն փաշայի, որ տեսնելով ֆերմանները խոստացաւ անշուշտ կատարել Սիմէոնի կամքը, ուստի Յօնանը, իբրև կանխապէս տուած հրահանգութեան համեմատ, խոստացաւ հինգ հարիւր ղուռուշ տալ փաշային, եթէ շուտով իրագործէ վէհի ցանկութիւնը։ Յօնանը վէհի պատուէրն ու տեղական հանգամանքները աչքի առաջ ունենալով՝ այդ ամենը ծածուկ էր պահում իւր մէջ, որպէսզի մի գուցէ աղթարմաներն իմանալով՝ իրանց համար ազատուելու մի ելք ստեղծէին։ Ուստի զգուշանալով թղթերից, որ որպէս և ի ցէ յրանուին ճանապարհին և գաղտնիքը չբացուի, Յօնանը մի ծածկագրով—«[illegible]» *) բոլոր եղելութիւնը յայտնում է կաթողիկոսին։ — Սիմէոնը նոյն «նորահնար գրով» և առանց կնիքի պատասխան է ուղարկում, սաստիկ պէս պատուիրելով, որ եթէ փաշան ֆերմանի բոլոր բովանդակութիւնը չկատարի՝ ոչինչ չտայ։

Շատ չանցած ստացուեցաւ Բ. Դռնից և այդ ընդհանուր հրամանագիրը. բայց մինչև սորա ստացուիլը Սիմէոն կաթողիկոսը առանձին թղթով բանադրեց Գէորգին, որ հենց լսեց, թէ օսմանեան պետութիւնը հրամանագրել է խստիւ հալածել և պատժել կաթոլիկ խռովարարներին և կաթոլիկութիւն ընդունած հայերին, Ախալցխայից գաղտնի փախաւ Կ. Պօլիս տեղական կաթոլիկների մօտ և նոյն տարին վախճանեցաւ այնտեղ։ Ստացուած ֆերմանը Սիմէոնը ուղարկեց Ախալցխայի Նաման փաշային, որ անյապաղ եօթն կաթոլիկ պատերին, որոնք բուն էին դրել Ախալցխայում, աքսորեց իրանց երկիրը, եկեղեցիները հայ ժողովրդին յանձնեց, նոցա՝ որոնք չեղուել էին իրանց կրօնից, տանջանքով և տուգանքներով պատժեց, վերլուծեալ չորս հոգևորականներին կապած իւր մարդու ձեռքով ս. Աթոռն ուղարկեց 1769 թուականին, որոնք երեք տարի մնալով ապաշխարեցին իրանց յանցանքների ու դաւանութեան թուղթ գրելով՝ «Նզովիւք» ուխտեցին հայ եկեղեցուն հաւատարիմ մնալ և չթիւրել ամենևին նորանից։

Այդ միջոցին պատերազմը զօրացած լինելով օսմանցւոց և ռուսաց մէջ՝ Ախալցխացիները աղաչեցին Մուստաֆայ փաշային, որ այդ ժամանակ սարասկեարի պաշտօնով Կարս էր նստած, միջնորդել Սիմէոն կաթողիկոսին ազատելու նոցա կապանքից։ Սիմէոնը գործի բոլոր մանրամասնութիւնները հաղորդեց սարասկեարին, յիշելով թէ ինչպէս նոքա աղմկում են խեղճ ժողովրդի հոգեկան խաղաղութիւնը, ուստի խնդրեց նորան, որ հեռաւորներից մի նոր պարտաւորագրութիւն առնէ տաճկերէն լեզուով և վաւերացնելով իւր ու Կարսի այլ նշանաւոր պետական անձանց ստորագրութիւններով՝ ուղարկէ իրան։ Այս թէ գրեց Կ. Պօլիս և բերել տուեց արձակման ֆերմանն ու 1771 թուին վերադարձրեց նոցա Ախալցխա։

Ախալցխայի կողմը այսպիսով ապահովելուց յետոյ՝ երկրորդական ֆերմաններից մէկը Սիմէոնն ուղարկեց Բայազէդի Ապտի փաշային, որպէսզի այն կողմերի աղթարմաների գլխաւորներին ևս շուտով ս. Աթոռն ուղարկէ։ Անմիջապէս ուղարկուեցան ս. Էջմիածին Բայազէդից եօթը չարագլուխներ այն է՝ հինգ քահանայ, մի տիրացու, որին Երևանք էին անուանում Դարսան գիւղացի, և մի աշխարհական Մաթոս անունով։ Սոցա ամենին Սիմէոն կաթողիկոսը պատժեց ըստ արժանւոյն և առնելով նոցանից երդմնագիր բազմաթիւ պաշտօնական անձանց վաւերացուցմամբ, որ այլ ևս կաթոլիկական դաւանութիւնը չեն պաշտիլ և հետևողներին բոլորին էլ մեր եկեղեցին կը դարձնեն՝ ամենքին ազատեց և ուղարկեց իւր տեղերը։

ԳԻՒՏ ՔԱՀԱՆԱՅ ԱՂԱՆԵԱՆ

(Կը շարունակուի)։

---

*) Այդ շարականի մէջ եկեղեցին նըզովում է հերետիկոսներին։

*) Տես գրքիս 59 ծանօթութիւնը։

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՀՈՒՆԳԱՐԻԱ. — «Mémorial Diplomatique» թերթը հաղորդում է որ հունգարական կիսապաշտօնական թերթի հաստատութեան հակառակ, 13-դ զօրաբաժինը պատրաստվում է դէպի Սերբայի սահմանը առաջ գընալ։ Բացի այս դուքս դ'Էստէի գունդը շուտով ուղևորուելու է դէպի Զեմլին։ Միևնոյն ժամանակ միջոցներ է ձեռնարկուած որ հունգարական ժամուլը որքան կարելի է շատ տագնապեցուցիչ լուրեր հաղորդէ Սերբիայի ներքին դրութեան մասին։ Մի քանի թերթեր արդէն իսկ հաղորդում են որ արիւնահեղ դէպքեր են տեղի ունեցել Սերբիայում։ «Այս բոլոր փաստերն իրաւունք տալիս են թագրել, ասում է «Mémorial Diplomatique» ը,—որ հունգարիան մի պատրուակ է որոնում զէնքով միջամտելու Սերբիայի ներքին գործերին»։

ՖՐԱՆՍԻԱ.—«Matin» լրագրի ասելով մի քանի պատգամաւորներ պատրաստվում են Զատկից լետոյ մի շարք հարցապնդումներ անել ազգային ժողովում տէրութեանը այն հարցի վերաբերութեամբ, թէ արդեօք որ և է ստորագրուած դաշնադրութիւն կայ Ռուսաստանի և Ֆրանսիայի միջև թէ ոչ։

ՃԱՊՈՆԻԱ.—Ճապոնական պարլամենտի անդամների ընտրութիւնը տեղի են ունեցել մարտի 1-ին։ Ինչպէս հաղորդում են Եօկագամայից պատամխոները 120 տեղ են վաստակել, այսինքն 80-ով աւելի քան վերջին ընտրութիւններին։ Տէրութիւնը յոյս ունի, որ նոր պատգամաւորները կը նպաստեն իրեն մաքառելու հակաեւրոպական շարժման դէմ, որովհետև ընտրութիւնները իւր համար յաջողութեամբ վերջացան, թէև Ճապոնիայի զանազան մասերում արիւնահեղ ընդհարումներ տեղի ունեցան։

«ԱՐՁԱԳԱՆՔԻ»

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԵԱՆ

Մարտի 13 ից.

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. — Պետական խորհուրդը կը քննէ Վլադիկավկազի երկաթուղու գծի վրայ շոգեկառքերի թուի աւելացնելու և նաւթային խողովակ կառուցանելու խնդիրը։

Մարտի 14-ից.

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ.—Երկրագործութեան նախարարութեան վերջնական կազմակերպութիւնը հաւանականօրէն տեղի կ'ունենայ մինչև ապրիլի 15-ը։

ԶԱՆԱԶԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՔԱՂԱՔԱՎԱՐՈՒԹԻՒՆ

Պ. Խմբագիր.

Ի՞նչ է պատճառը, որ Սաղիանի վանական դպրոցի «Արձագանքի» համարները ուղարկում էք Սալիան. մինթէ Սաղիան և Սալիան չէք զանազանում միմեանցից։ Խնդրեմ ուղղէք սխալը և Սաղիան ուղարկէք և ոչ թէ ուրիշ տեղ. շատ համարներ կորած են՝ դուք գտէք։

Աւագ-ուս. Ստեփաննոս Տէր-Ստեփանեան.
8-ն մարտի 1894 թ. Շամախու թեմ. Սաղիան։

Խմբագիր-Հրատարակիչ՝
ԱՐԳԱՐ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Բ. ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆԻ
(Կուկիա, Վորոնցովի արձանի հանդէպ)
Հիւանդներին ընդունում են ամեն օր, բացի կիւրակի օրերից։

ՈՒՍՈՒՑՆԵՐԸ

Բ. Ա. ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան և վեներական (սիֆիլիս) հիւանդութիւնների։
Կ. Մ. ՁԻԿՈՎԱՆԻ—9—10 ժ. աչքի և նեարդային հ.
Դ. Գ. ԲՈՒԴԿՈՎՍԿԻ—10—11 ժամը ներքին, երեխայոց և կանանց հ.
Ի. Ֆ. ՊՐՕՏԱՍԵՒԻՉ—11½—12½ ժ. ականջի, կոկորդի, քթի և կրծքի հ.
Կին-բժիշկ ՏՈՒՐԲՈՎԻՉ—12½—1 ժ. կանանց հ.
Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—1—1½ ներքին և երեխայոց հ.

ԵՐԵԿՈՆԵՐԸ

Ա. Գ. ԳՈՒՐԿՕ—6—7 ժ. Սիֆիլիսի և մէզի ու սեռական օրգանների հ.
Բ. Ա. ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆ—7—7½ ժ.
Ի. Ե. ՖՐԱՆՑԻՈՒՍ—7—7½ ականջի, կոկորդի և քթի ու նեարդային հ. երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ.
Ա. Գ. ԳՈՒՐԿՕ քիմի-խոշորացուցական հետազօտութիւն է անում մէզի, խխի, արեան, կաթի և այլն։
Վճար 50 կ.։ համալսորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։
Հիւանդանոցումը ընդունվում են և ԳԻՇԵՐՕԹԻԿ ՀԻՒԱՆԴՆԵՐ։

Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Նախասարդեան։

ՓՕՍՏԱՅԻՆ ԵՐԹԵՒԵԿՈՒԹԻՒՆԸ ՎՐԱՑ ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ՃԱՆԱՊԱՐՀՈՎ

Թիֆլիզից՝ հինգ հոգու տեղ ունեցող կառքը ուղևորվում է առաւօտեան 7 ժամին, գիշերում է Մլեթի կայարանում, Վլադիկավկազ է հասնում հետևեալ օրը ժամը 7-ին երեկոյեան։

Հինգ հոգու տեղ ունեցող կառքը դարձեալ ուղևորվում է առաւօտեան 6 ժամին, գիշերում է Պասանաուր կայարանում, հասնում է Վլադիկավկազ հետևեալ օրը ժամը 10-ին երեկոյեան։

Վեց հոգու տեղ ունեցող հանրակառքը (օմնիբուս) ուղևորվում է կէսօրից ետոյ ժամը 3-ին և առանց գիշերելու տեղ է հասնում հետևեալ օրը ժամը 7-ին երեկոյեան։

Վեց հոգու տեղ ունեցող հանրակառքը (օմնիբուս) դարձեալ ուղևորվում է ճաշից յետոյ 5 ժամին և առանց գիշերելու հասնում է Վլադիկավկազ հետևեալ օրը 9 ժամին երեկոյեան։

Վլադիկավկազից՝ հինգ հոգու տեղ ունեցող կառքը ուղևորվում է առաւօտեան ժամը 7-ին, գիշերում է Մլեթի կայարանում, Թիֆլիզ է հասնում հետևեալ օրը ժամը 7-ին երեկոյեան։

Հինգ հոգու տեղ ունեցող կառքը դարձեալ ուղարկվում է առաւօտեան ժամը 9-ին, գիշերում է Գուդաուր կայարանում, հասնում է Թիֆլիզ հետևեալ օրը ժամը 9 ին երեկոյեան։

Վեց հոգու տեղ ունեցող հանրակառքը (օմնիբուս) ուղևորվում է կէսօրից յետոյ ժամը 3-ին և առանց գիշերելու հասնում է Թիֆլիզ հետևեալ օրը ժամի 7-ին երեկոյեան։

Վեց հոգու տեղ ունեցող հանրակառքը (օմնիբուս) դարձեալ ուղևորվում է ճաշից յետոյ ժամը 5 ին և առանց գիշերելու հասնում է Թիֆլիզ հետևեալ օրը ½ ժամին երեկոյեան։

ՌՈՒՍԱՑ ՇՈԳԵՆԱՒԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ամեն շաբաթ շոգենաւերի երթեւեկութիւն Բաթումի, Օդեսայի եւ Կ. Պօլսի միջեւ։

Բաթումից դուրս է գնում.

Շաբաթ օրերը (լոյս կիրակի գիշերուայ 2 ժ.) շրջանառու ընթացքով բոլոր նաւահանգիստները։

Կիրակի օրերը, գիշերուայ ժամը 11½-ին, խուճապ ընթացքով Եալտայի և Սեւաստապոլի վրայով։

Երեքշաբթի օրերը լոյս չորեքշաբթի գիշերուայ ժամը 2-ին) շրջանառու ընթացքով բոլոր նաւահանգիստները։

Հինգշաբթի օրերը ցերեկուայ ժամը 12-ին ուղիղ ընթացքով Նովօրոսիյսկի և Կերչի վրայով։

Կ. Պօլիս երկու շաբաթը մէկ անգամ երեկոյեան ժամը 7-ին։

Բաթում է հասնում.

Ուրբաթ օրերը երեկոյեան, շրջանառու ընթացքով բոլոր նաւահանգիստների վրայով։

Ուրբաթ օրերը առաւօտեան, խուճապ ընթացքով Սեւաստապոլի վրայով։

Երկուշաբթի օրերը երեկոյեան շրջանառու ընթացքով բոլոր նաւահանգիստների վրայով։

Չորեքշաբթի օրերը առաւօտեան ուղիղ ընթացքով Նովօրոսիյսկի և Կերչի վրայով։

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

Մարդատար գնացքը Թիֆլիզից Բաթում դուրս է գնում առաւօտեան ժ. 9-ին 30 ր. և Բաթում հասնում է երեկոյեան ժ. 9-ին 45 ր.։

Փոստային գնացքը Թիֆլիզից Բաքու դուրս է գնում ցերեկուայ ժ. 1-ին 20 ր. և հասնում է Բաքու առաւօտեան 7 ժ. 30 ր.։

Փոստային գնացքը Թիֆլիզից Բաթում դուրս է գնում երեկոյեան ժ. 6-ին 50 ր. և Բաթում հասնում է առաւօտեան ժ. 8-ին 15 ր.։

Մարդատար գնացքը Բաթումից Թիֆլիզ դուրս է գալիս առաւօտեան ժ. 9-ին 45 ր. և Թիֆլիզ հասնում է երեկոյեան ժ. 9-ին 52 ր.։

Փոստային գնացքը Բաթումից Թիֆլիզ դուրս է գնում գիշերուայ ժ. 11-ին 25 ր. 1 Թիֆլիզ է հասնում ցերեկուայ ժ. և 2-ին 25 ր.։

Փոստային գնացքը Բաքուից Թիֆլիզ դուրս է գալիս գիշերուայ ժ. 11-ին 10 ր. և Թիֆլիզ հասնում է ցերեկուայ ժ. 5-ին 50 ր.։

Ամառուան գնացքը Թիֆլիզից Միխայլովօ դուրս է գնում ճաշից յետոյ 3 ժամին. Միխայլովոյից Թիֆլիզ՝ առաւօտեան 8 ժ, 10 ր. ապրանքա-մարդատար գնացքը Թիֆլիզից Գանձակ դուրս է գնում երեկոյեան 9 ժամին 20 ր., իսկ Գանձակից Թիֆլիզ է հասնում առաւօտեան 1 ժ. 30 րոպէին։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԹԻՖԼԻԶԻ ՓՈԽԱԴԱՐՁ ՎԱՐԿԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Վարչութիւնը պատիւ ունի յայտնել ի գիտութիւն ընկերութեան պ. պ. անդամների, որ տարեկան

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

նշանակուած է այս տարուայ մարտի 27-ին։
Ժողովի տեղի և ժամի մասին առանձին կը յայտարարուի։
(2—1)

Լոյս տեսաւ
ՈՒԱՇԻՆԳՏՕՆ ԻՐՎԻՆԳԻ
ՄԱՀՄԵԴԻ ԿԵԱՆՔԸ
Անգլիերէնից թարգմ.
ՓԻԼԻՊՊՈՍ ՎԱՐԴԱՆԵԱՆ
ԳԻՆՆ Է 1 ռ. 20 կ.

Վաճառվում է թարգմանչի մօտ՝ Мариино-Анановское училище և կենդրոնական գրավաճառանոցում։

ԿԵՆԴՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ
ՏՓԽԻՍՈՒՄ ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ ՀԵՏԵՒԵԱԼ ՆՈՐ ԳՐՔԵՐԸ ռ. կ.

1) Վեհափառ Հայրիկի կենսագրական պատկերը, գինն է . . . — 40
2) Աճէմեան, Գարնան հովերը, քերթ. Կ. Պօլիս 1892 թ. գ. . — 40
3) Նազիկեանց թարգ. Առողջաբանութիւն երիտասարդուհեաց Կ. Պօլիս 1886 թ. գինն է . . . . — 75
4) » Ուղեցոյց կանանց և օրիորդաց ի կեանս առտնին և ընկերական Կ. Պօլիս 1885 թ. գինն է 1 25
Ճահբուղաղեանց Գր. Թարգմանութիւնները՝
5) » Մայրական գաստիարակութիւն գինն է — 40
6) » Կնոջ կոչումը և դաստիարակութիւնը գ. — 40
7) » Պապի ձեռնոցներ մանկական վէպ գ. — 15
8) » Փայլուն կոպէկ մանկական վէպ գինն է — 25
9) » Եշնանային երեկոյ գիւղում վօղէվիլ մէկ արարուածով գինն է . . . . — 25
10) » Ժանօ և ժանէտ օպէրա-վօդ. մէկ ար.գ. — 40
11) » Ոսկի Բզէզ ժողովրդական վէպ գինն է. — 20
12) » Բնաւորութեան կրթութիւն գինն է . . — 60
13) » Օմալ մանկական վէպիկ գինն է . . . — 8
14) » Փարաւոնի աղջիկը պատմական վէպ գ. — 80
15) » Իշխանն ու Աղքատը պատմական վէպ գ. 1
16) Պեռկզօն Արուեստ հարստանալու և հարստութ. պահելու գ. — 30
17) Սունդուկեանց, Ամուսիններ կոմեդիա հինգ արարուածով գ. 1
18) » Խաթարալա կոմեդիա չորս արարուածով գ. — 50
19) » Պէպօ կոմեդիա երեք արարուած, գինն է — 30
20) » Քանդած օջախ կոմեդիա երեք արարուած. գ. — 50
21) Սենկևիչ Առանց Դաւանքի (վէպ) գինն է 1 25
22) Մահմեդի կեանքը Փ. Վարդանեան (թարգմանութ.) գինն է 1 20
(Նոյն տեղը վաճառվում են պ. Վարդանեանցի բոլոր թարգմանութ.)
24) Քօլօլեան, Ջուարճ. բժշ. սալօնի համար Կ. Պօլիս 1893 թ. գ. — 65
25) Քուչարեանց Գրիգոր Մեղապարտ հրեշներ դրամա չորս գործողութեամբ Թիֆլիզ 1894 թ. գինն է . . . . . — 30
26) » Մեղապարտ փարիսեցիներ դրամատիկական անցքեր հինգ պատկերով Թիֆլիզ 1894 թ. գինն է — 20
27) » Մխիթարանք և հանդիստ չափաբերակ. գրուածք. Թիֆլիզ 1894 թ. գինն է . . . . — 30
28) » Բանտերը և նոցա բնակիչ. Թիֆ. 1894 թ. գ. — 20
29) Յովհաննիսեան Ռուսէրէնից—հայերէն բառգիրք, հատ. առաջ. 3 —
հատոր երկրորդ . . . . 4 —
30) Эминъ Исторія Арменіи Моисея Хор. Москва 1893 г. ц. 2 —
31) Семидесятипятилѣтіе Лазаревскаго Института 1815,—1890 г. Москва 1891 г. цѣна 2 25
5—4

,,ՀԱՐԱՒԱՅԻՆ ԲՈՒԽԱՐԻԱ"
Ռոստովի գարեջրի գործարանատան
ԳԼԽԱՒՈՐ ՊԱՀԵՍՏԸ
գտնվում է Վօկզալնայա փողոցում
ԿԱՐԼ ՍՏՈՒԿԷՆԻ
առևտրական տան պատկանեալ նկուղներում
Էքսպօրտ 1/20 վէդրօանոց 22շերով վեդրօն . . . . 3 ռ.
Պիլզէն » » . . . . 3 »
Պէլ-էլ 1/40 » » . . . . 4 » 80 կ.
Մանրածախը լինում է բոլոր ամենալաւ բագալէյնի և գաստրոնմիական մագազիններում։
Պատուէրներով պէտք է դիմել Վօկզալնայա շոսսէի պահեստը կամ Կ. Ստուկէնի գրասենեակը (Վելիամինովի փողոց, տուն № 6, Չալխեշտովի)։
(10—5)

НА 1894 ГОДЪ
ПРОДОЛЖАЕТСЯ ПОДПИСКА
НА ЕЖЕДНЕВНУЮ ГАЗЕТУ
„БАКИНСКІЯ ОБЪЯВЛЕНІЯ"
(около 360 номеровъ въ годъ)

ЕЖЕДНЕВНО ПЕЧАТАЮТСЯ СОБСТВЕННЫЯ ТЕЛЕГРАММЫ
(отъ „Сѣвернаго телеграфнаго агентства").

ПОДПИСНАЯ ЦѢНА:

Съ доставкою въ г. Баку:	Съ пересылкою по почтѣ:
На 1 годъ . . . . 2 р. — к.	На 1 годъ . . . . 3 р. 50 к.
,, 6 мѣсяцевъ. . . . . 1 р. 50 к.	,, 6 мѣсяцевъ. . . . . 2 р. — ,,

ОТДѢЛЬНЫЕ НОМЕРА ПО 2 КОП.

ПЛАТА ЗА ОБЪЯВЛЕНІЯ:
За строку петита, отъ 1 до 3 разъ: на 1-й страницѣ 8 коп., на 4-й 6 к. 6о ѣ трехъ разъ—по особой таксѣ. Годовыя объявленія: на 1-й страницѣ по 1½, на послѣдней—по 1 коп. за строку петита. Ищущимъ труда и занятій и благотворительнымъ учрежденіямъ дѣлается 50%, казеннымъ учрежденіямъ 10% скидки. За годовыя объявленія въ 5 стр. петита въ отдѣлѣ „Адресъ-календарь", съ правомъ мѣнять текстъ три раза, взим. 12 руб.
Подписка и объявленія принимаются въ конторѣ газ. „Бакинскія Объявленія", (Лалаевскій пр., помѣщеніе конторы типографіи Гюльбасарова и Шахбагова). Телефонъ № 123.

Վեհափառ Կաթողիկոսի հրամանով
ԼՈՅՍ ՏԵՍԱՒ
ժողովրդական ընթերցանութեան համար
„ՉԱՐՉԱՐԱՆՔԻ ՃԱՆԱՊԱՐՀ"
80 երեսով և 6 պատկերով։
Գինն է 15 կոպէկ։ Գումարով առնողին՝ 12 կոպէկ։
Գումարով առնողը ճանապարհածախս չէ վճարում։
Դիմել՝ Тифлисъ, священнику Эммануэлу Назарянцъ.
(3—1)

„Ա. ՓՐԻԴՈՆԵԱՆ եւ ԸՆԿ."
ԲԱՆԿԱՅԻՆ ԳՐԱՍԵՆԵԱԿԸ
ԱՊԱՀՈՎԱՑՆՈՒՄ է I և II փոխառութեան խաղարկութեան տոմսերը՝ խուրաքանչիւրը 75 կոպէկով։

ՊԱՀԵՍՏԻ ՀԵՌԱԽՕՍ № 77 ՎԱՃԱՌԱՆՈՑԻ ՀԵՌԱԽՕՍ № 61
ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՀԱՍՏԱՏՈՒԱԾ
ԿՈՎԿԱՍԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԴԵՂԱԳՈՐԾԱԿԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ
ԹԻՖԼԻԶՈՒՄ եւ ԲԱԳՎՈՒՄ
Դեղավաճառական և քիմիական ապրանքներ։
Բնական հանքային ջրեր։
Արտօնութիւն ստացած դարմանելու միջոցներ։
Անուշահոտ և անուշաբոյր ապրանք։
Տնտեսութեան համար իրեղէններ։
Դեղավաճառական և գործարանական պաշարներ։
Ախտահանիչ միջոցներ։
Վիրաբուժական գործիքներ։
Ռետինից պատրաստուած իրեղէններ։
Լուսանկարչութեան վերաբերեալ գործիքներ։
Եթերային իւղեր, մրգերի հիւթեր և լիկեօրնի ու օղիների համար ներկեր։
Գլխաւոր պահեստ ամբողջ Կովկասի համար՝ Պետերբուրգի-քիմիական գործարանի, Մոսկվայի—«Բրօկարի և ընկ.», Վարշավայի—Ձտիւրմերի, Մոսկվայի—Բօդլօ և ընկ., Ռիգայի—Միւլլէնսի։
Միակ պահեստ Թիֆլիզի «Անդրկովկասեան Քիմիական Գործարանի»։
Գլխաւոր պահեստ ռուս-ամերիկական ռետինի իրեղինաց պատրաստութիւն Պետերբուրգում։
(134—9)

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ
Օ. ԶԻԲԵՐՏԻ
(№ 7, Դվօրցովայա փողոց, տ. Սարաջևի, № 7)
ՍՏԱՑՈՒԱԾ ԵՆ ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ
ԻՍԿԱԿԱՆ **ԺԱՊՈՆԱԿԱՆ** ԾԵՆԴՐ ԻՐԵՂԷՆՆԵՐ
ԱԼԲՕՄՆԵՐ, ԻՐԵՂԷՆՆԵՐ **ՓՂՈՍԿՐԻՑ, ԿԱՑՈՒՑ** ԵՒ **ՄԵԼԽԻՈՐԻՑ**
(150—26)

Այն անձանց, որոնք յաճախակի դիմում են ինձ հարցնելու, թէ իմ «ԴԱՍԱՏԵՏՐ ԿՐՕՆԻ» ա. բ. և գ. տարիների համար կազմած կրօնի դասագրքերը թոյլատրուած են արդեօք հոգևոր իշխանութիւնից, պարտք եմ համարում յայտնելու, որ ի 28 փետրուարի 1894 № 262 **ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹԻՒՆԸ** բարեհաճել է հրամայելու վերոյիշեալ գրքերը մուծանելու ի շարս այն դասագրքերի, որոնք գործ են ածւում մեր եկեղ.-ծխական դպրոցներում։
Սիւքեան Մուշեղ Սահակ ք. Սահակեանց։

ՄԱՄՈՒԼԻ ՏԱԿԻՑ ԼՈՅՍ ՏԵՍԱՒ
և ուղարկուեց բաժանորդներին
„Թ Ա Տ Ր Ո Ն"
ԳՐԱԿԱՆ ԵՒ ԹԱՏԵՐԱԿԱՆ ՀԱՆԴԷՍ
ԱՌԱՋԻՆ ԳԻՐՔԸ
ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ
ՅԱՌԱՋԱԲԱՆԻ ՏԵՂ . . . . Հրատարակիչ
ՍԿԱՊԵՆԻ ԱՐԱՐՔՆԵՐԸ, կոմ. Մոլիէռի, թարգմ. . . Յ. Լալայեան
ՀԱՅՈՑ ԹԱՏՐՈՆԻ ՍԿԶԲՆԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ Թիֆլիզում . Պ. Պռօշեան
ԹԱՏՐՈՆ, ԲԵՄ և ԼԵԶՈՒ . . . . Ս. Հախումեան
ԳԷՈՐԳ ՄԻՐԶԱԵԱՆՑ . . . . Յիշողներից մէկը
ԿԱՆՈՆՆԵՐ ԴԵՐԱՍԱՆՆԵՐԻ համար, Գէօթէ. թ. Հ. Ա.
ԹԱՏՐՈՆԻ ԼՈՒՍԱՏՈՒ ԱՍՏՂԵՐԸ, բեմ. պ. Փրէյնտի թ. Ս. և Z
ԹԱՏՐՈՆԻ ՔՐՈՆԻԿՈՆ՝ արտասահմանից . . . . . Վ. Փափազեան
» » Պետերբուրգից . . . . . Թատերասէր
ՊԻԵՍՆԵՐ «Միւս անգամ», մենախ. թարգմ. . . . Ա. Թ.
ԲԱՆԱՍՏԵՂԾ ԿԱՏԱԿ, հեղինակութիւն. . . . . . Փառնակէս
ԴԱՐԲՆԱՊԵՏ, կոմ. 4 գործ. փ. Օհնէի, թարգմ. . . Ս. Արծրունի
Պատկերներ՝ I խումբը Գ. Միրզաեանց։
ԳԻՆՆԷ 2 ՌՈՒԲԼԻ
Հրատարակիչ՝ ԱՂԵՔՍԱՆԴՐ ԹԱՐԽԱՆԵԱՆ։
II-րդ ԳԻՐՔԸ լոյս կը տեսնէ, նոյն ծաւալով, նոյն ուղղութեամբ, առաջիկայ ապրիլին։
ԵՐԿՈՒ ԳՐՔԻ ԱՐԺԷՔՆ Է 3 Ռ. (տարաքաղաքացիների համար 3 ռ. 30 կ.)
Իւրաքանչիւր հատորը առանձին 2 ռ.։ Վաճառվում է բացառապէս կենդրոնական գրավաճառանոցում և ինձ մօտ։
Դիմել հետևեալ հասցէով՝ Тифлисъ, Александру Тарханьянцъ կամ Կենդրոնական գրավաճառանոց, или въ Центр. кн. торговлю.